

ԱՆԽԱՏԱՆՔԱՅԻՆ ԱՅՅ



Առևտրատնտեսական նոր հարաբերություններ երկու երկրների միջև

Վերջերս պաշտոնական այցով Վրաստանում է գտնվել ՀՀ գյուղատնտեսության նախարար Իգնատի Առաքելյանը: Նա հանդիպել է Վրաստանի գյուղատնտեսության նախարար Լևան Դավիթաշվիլիի հետ: Հանդիպմանը մասնակցել է նաև ՀՀ ԳՆ սննդամթերքի անվտանգության պետական ծառայության պետ Իշխան Կարապետյանը:

Հանդիպման ընթացքում կողմերը քննարկել են հետագա համագործակցությանն առնչվող մի շարք հարցեր: Առանձնահատուկ ուշադրություն է դարձվել Վրաստանում և Հայաստանում գյուղատնտեսական քաղաքականության և զարգացման ռազմավարության ուղղությամբ իրականացվող քայլերին: Կողմերը մասնավորապես անդրադարձ են կատարել սննդամթերքի անվտանգության, անասնաբուժության և բուսասանիտարիայի ոլորտում համագործակցությանը, ինչպես նաև երկու երկրների միջև առևտրատնտեսական հարաբերություններին առնչվող հարցերին:

Նախարար Իգնատի Առաքելյանը նշել է, որ կառավարության կողմից գյուղատնտեսությունը գերակա ոլորտ հայտարարելը էականորեն նպաստել է ոլորտի զարգացմանը, ինչի արդյունքներն ակնհայտ են: Նախարարը կարևորել է երկու երկրների միջև փորձի փոխանակումը և հետագա համագործակցության ամրապնդումը:

Վրաստանի գյուղատնտեսության նախարար Լևան Դավիթաշվիլին հայտարարել է, որ երկու երկրների համագործակցությունը գյուղատնտեսության ոլորտում և համատեղ ծրագրերի իրականացումն էապես կնպաստեն առևտրային հարաբերությունների զարգացմանը:

Այնուհետև նախարարն այցելել է Վրաստանի սննդամթերքի անվտանգության պետական ծառայություն, պարարտանյութի և անասնակերի արտադրությամբ զբաղվող գործարաններ և գիտնականներ:

ՀՈՒՇԱԳԻՐ

Աջակցել շուկաների ձևավորման խնդիրների լուծմանը

ՀՀ գյուղատնտեսության նախարար Իգնատի Առաքելյանը և ՀՀ ագրոարդյունաբերական համակարգի աշխատողների արհեստակցական կազմակերպությունների ճյուղային հանրապետական միության նախագահ Հասմիկ Ջհանգիրյանը ստորագրել են սոցիալական գործընկերության հուշագիր:

Հուշագրի նպատակն է՝ հաստատել երկարաժամկետ և փոխշահավետ համագործակցություն մի շարք առանցքային ուղղություններով, նպաստել ոլորտի աշխատողների բարեկեցության բարձրացմանը, պաշտպանել նրանց աշխատանքային և սոցիալ-տնտեսական իրավունքներն ու շահերը, ինչպես նաև աջակցել գյուղատնտեսական մթերքների արտադրության զարգացման և շուկաների ձևավորման խնդիրների լուծմանը: «Մեր նպատակն է՝ այս հուշագրով ստեղծել մի հարթակ, որի միջոցով գյուղացիական տնտեսությունները կկարողանան դիմել և ստանալ իրավաբանական աջակցություն: Հուսով եմ, այն կնպաստի գյուղացիների սոցիալ-տնտեսական կյանքի բարելավմանը և իրավական դաշտում նրանց իրավունքների պաշտպանությանն ու խնդիրների լուծմանը», - նշել է նախարար Իգնատի Առաքելյանը: Նախարարն իր խոսքում ընդգծել է նաև Ագրոարհմիության հետ հաջողված համագործակցությունը փոքր ջերմոցային տնտեսությունների ոլորտում: Հասմիկ Ջհանգիրյանն իր հերթին վստահություն է հայտնել, որ գյուղացիներին հուզող խնդիրների լուծումն առավել նպատակահարմար է իրականացնել սոցիալական գործընկերության շրջանակներում: «Մենք շատ ենք կարևորում սույն հուշագրի ստորագրումը, քանի որ կարծում ենք, որ երկու կողմերի փոխհամաձայնեցված աշխատանքներն ավելի արդյունավետ կլինեն: Երկար տարիներ աշխատելով գյուղացիական ոլորտի ներկայացուցիչների հետ՝ մենք եկանք այն եզրակացության, որ ՀՀ գյուղատնտեսության նախարարության և Ագրոարհմիության միջև համագործակցության անհրաժեշտությունն արդեն հաստատվել էր», - հավելել է Հասմիկ Ջհանգիրյանը: Հուշագրի շրջանակում նախատեսվում է կազմակերպել նաև համատեղ խորհրդակցություններ, սեմինարներ, վերապատրաստումներ, ժողովներ՝ ուղղված ոլորտի աշխատողների շահերի ներկայացմանը և պաշտպանությանը, համագործակցել համապատասխան միջազգային կազմակերպությունների, արհմիութենական միությունների, հիմնադրամների հետ և այլն:

ՊԱՇՏՈՆԱԿԱՆ

Վարչապետ Կարեն Կարապետյանը ՀՀ Լոռու, Տավուշի, Փեղարքունիքի, Շիրակի, Արարատի և Արագածոտնի մարզերից հավանության արժանացած 11 ներդրումային ծրագիր ներկայացրած գործարարների հետ քննարկել է դրանց հետագա իրականացմանը վերաբերող հարցեր: Նշվել է, որ վարկավորման գործընթացն սկսվել է, ծրագրերի մեծ մասի համար վարկերն արդեն տրամադրման փուլում են: Կարեն Կարապետյանը հանդիպման մասնակից գործարարներից հետաքրքրվել է պատկան գերատեսչությունների հետ ներդրումային ծրագրերի հետագա ընթացքի առնչությամբ ձեռք բերված պայմանավորվածությունների մասին: Ի պատասխան՝ գործարարները գոհունակություն են հայտնել համատեղ աշխատանքից: «Մարզերից ներկայացվող ծրագրերի ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ ֆինանսավորման հիմնական բեռն ընկնում է պետության վրա, բայց մեզ պետք է, որ բիզնեսմենն իր վրա վերցնի բեռի 60, 70, 80 %, և եթե 20, 30 % է պակասում, մենք համեմատաբար փոքր գումարներով կփորձենք աշխուժացնել», - ասել է վարչապետը:

Ներկայացված ներդրումային ծրագրերը հետևյալն են՝ Լոռու մարզի Ամրակից համայնքում ֆերմերային տնտեսության և Վանաձոր քաղաքում «Ռոգֆոնոլ» արտադրամասի ընդլայնում, Տավուշի մարզի Իջևան քաղաքում ժամանակակից տեխնոլոգիաներով բազմաբերք ելակի արտադրության զարգացում, Փեղարքունիքի մարզի Վարդենիս քաղաքում շինչիլաբուծական տոհմային տնտեսության ընդլայնում և Վարդենիսի պանրի գործարանի զարգացում, Շիրակի մարզի Գյումրի քաղաքում «Խելացի տուն համակարգի արտադրություն» և «Բասեն» հյուրանոցային համալիրի, առևտրի կենտրոնի կառուցում և հանրային սննդի կազմակերպում, Արարատի մարզի Մասիս քաղաքում սպանդանոցի ընդլայնում և թափոնների վերամշակման հոսքազօի կառուցում, Արագածոտնի մարզի «Ոսկեվազ» գինու գործարանի և զբոսաշրջության նոր ուղղությունների զարգացում, Աշտարակում մետաղի հղկումից ու մշակումից պատրաստվող իրերի արտադրության և Սաղմոսավան համայնքում «Էկոմյունիթի» Էկոթաղամասի հիմնում:

ՀՀ Սյունիքի, Արմավիրի և Շիրակի մարզերում նախատեսված առաջնահերթ հակահեղեղային միջոցառումների իրականացման նպատակով կառավարության պահուստային ֆոնդից գումար կհատկացվի ՀՀ Էներգետիկ ենթակառուցվածքների և բնական պաշարների նախարարության ջրային տնտեսության պետական կոմիտեին: 2016-2017թթ. ձմռան ամիսներին հանրապետության գետավազաններում կուտակված բավական քանակությամբ ձյան պաշարը գարնան ամիսներին ջերմաստիճանի կտրուկ բարձրացման ու հորդառատ անձրևների պարագայում՝ գետերի ու հեղեղատարների խոցելի տեղամասերի ամրացման և մաքրման աշխատանքներ չիրականացնելու դեպքում, սելավների ու հեղեղումների ներգործությունը կարող է հանգեցնել հսկայական նյութական վնասների:

Վարչապետ Կարեն Կարապետյանի գլխավորությամբ կառավարությունում տեղի է ունեցել հերթական խորհրդակցությունը, որի ընթացքում քննարկվել են ՀՀ Սյունիքի և Լոռու մարզերից ներկայացված ներդրումային ծրագրերի փաթեթները: Սյունիքի մարզից ստացված ծրագրերը վերաբերում էին գյուղատնտեսական մատակարարման բազայի ձևավորմանը, սառնարանային տնտեսությունների հիմնմանը, օրգանական գյուղմթերքի վերամշակմանը և այլն: Լոռու մարզից ներկայացվել էին հացի արտադրությանը, ֆերմերային տնտեսությունների ստեղծմանը, թղթե տուպակների արտադրությանը, գյուղմթերքի վերամշակմանը վերաբերող ծրագրեր:

Վարչապետը նշել է, որ շահագրգիռ գերատեսչությունները պետք է ակտիվ համագործակցեն մարզերի գործարարների հետ, որպեսզի կառավարությունում քննարկման ներկայացվեն բոլոր համապատասխան կառույցների կողմից նախապես գնահատված և տնտեսապես հաշվարկված ծրագրեր:

Կոոպերացիա	Էջ 3
Արտադրություն	Էջ 5
Մեղվաբուծություն	Էջ 7

ԽՈՐՀՐԴԱԿՈՒԹՅՈՒՆ

Ներդրումային ծրագրերի քննարկում

ՀՀ գյուղատնտեսության նախարարությունում հրավիրվել էր խորհրդակցություն՝ ՀՀ Կոտայքի մարզից ստացված գյուղատնտեսության ոլորտին առնչվող ներդրումային ծրագրերը քննարկելու նպատակով: Խորհրդակցությունը վարում էր փոխնախարար Ռոբերտ Մակարյանը, մասնակցում էին ներկայացուցիչներ՝ ՀՀ տարածքային կառավարման և զարգացման նախարարությունից, «ՓՄՁ Ներդրումներ» ՈՒՎԿ-ից, Հայաստանի փոքր և միջին ձեռնարկատիրության զարգացման ազգային կենտրոնից, Հայաստանում գյուղական տարածքների տնտեսական զարգացման հիմնադրամից, ծրագրերի շահառուներ և այլ պատասխանատուներ:

Ռոբերտ Մակարյանը նշել է, որ Կոտայքի մարզից ստացվել է գյուղատնտեսությանն առնչվող թվով 5 ներդրումային ծրագրի առաջարկ: Ներկայացված ծրագրերի շրջանակում նախատեսվում է մարզում հիմնել ժամանակակից հիդրոպոնիկ եղանակով աշխատող ջերմոցային տնտեսություն, գործարկել կաշվի և կաշվե իրերի գործարան, այգիների կարկտապաշտպան համակարգերի համար երկաթբետոնե կուստրուկցիաների և կազմակերպել հենասյուների արտադրություն, հիմնել կաթի վերամշակման արտադրամաս և ստեղծել ուսումնաարտադրական կենտրոն՝ գետնախնձորից ինուլին և պեկտին ստանալու նպատակով:

Պատասխանատուներ, շահառուների հետ համատեղ, քննարկել և տվել են ներկայացված ծրագրերի ֆինանսական գնահատականները, նպատակահարմարությունն ու հիմնավորումները, ինչպես նաև ֆինանսավորման ուղղություններն ու աջակցության տարբերակները:

Քննարկումների արդյունքում որոշվել է թվով 4 ծրագիր՝ համապատասխան եզրակացություններով, ներկայացնել ՀՀ կառավարության քննարկմանը, մեկը՝ լրամշակել, քանի որ շահառուն ծրագրում լրացուցիչ փոփոխություններ էր նախատեսել:

Քննարկվել են կարտոֆիլագործության զարգացման ուղղությունները

ՀՀ գյուղատնտեսության նախարար Իգնատի Առաքելյանը հրավիրել էր աշխատանքային խորհրդակցություն՝ ՀՀ-ում գործող կարտոֆիլագործների միությունների, հասարակական կազմակերպությունների, խոշոր արտադրողների և ներմուծողների մասնակցությամբ՝ քննարկելու մեր երկրում կարտոֆիլագործության ճյուղի ընթացիկ խնդիրներն ու զարգացման հեռանկարները:

«Կարտոֆիլագործությունը Հայաստանի գյուղատնտեսության առավել կայացած ուղղություններից մեկն է, և ձեզ հետ նախաձեռնած այս հանդիպումը նպատակ ունի համատեղ քննարկել ճյուղի հետագա զարգացմանը խոչընդոտող խնդիրները, արտահանման ծավալների վերականգնման հնարավորությունները, հասկանալու համար, թե պետությունն ինչով կարող է աջակցել և օգտակար լինել, որպեսզի պարենային ապահովության տեսանկյունից կարևոր այս ոլորտն ինչպես հարկն է զարգանա, մասնավորապես բարձրանա բերքատվությունը, իջնի ինքնարժեքը և մենք ունենանք մրցունակ արտադրանք», - նշեց նախարար Իգնատի Առաքելյանը:

Կարևորելով պետություն-մասնավոր հատված փոխգործակցության շրջանակում նման ձևաչափով հանդիպումների հաճախակի կազմակերպումը՝ ներկաները շեշտեցին, որ ոլորտն իրապես կարելի է համարել կայացած: շուկան ձևավորված է, բացակայում են մենաշնորհները: Որպես խոչընդոտող խնդիրներ՝ բարձրացվեցին մասնավորապես շրջանառու միջոցների սղության, իրացման, մեխանիզացիայի մաշվածության ու բացակայության, սորոսաբարմացման, տնկանյութի սուբսիդավորման, որպես «Վերին Լարսին» այլընտրանք՝ պետության կողմից «Փոթի» նավահանգստում լաստանավի վարձակալման և այլ հարցեր:

Նախարարը հայտնեց, որ շուտով կմեկնարկի գյուղտեխնիկայի ձեռնարկման լիզինգային ծրագիրը, որը հնարավորություն կընձեռնի անհամեմատ մատչելի պայմաններով տեխնիկա գնել:

Հանդիպման ընթացքում կարտոֆիլագործներն անդրադարձան նաև համակցված պարարտանյութերի կիրառմանը և նշեցին, որ դա առավել արդյունավետ է, քան ազոտական, ֆոսֆորական և կալիումական պարարտանյութերի առանձին օգտագործումը, սակայն դրա ձեռքբերումը փոքր քանակներով բավականին թանկ է և ոչ նպատակահարմար: Նախարարն առաջարկեց համատեղ քննարկել, ձևավորել հստակ պահանջարկ, ներկայացնել գյուղատնտեսության նախարարություն, որպեսզի բանակցեն արտադրողի հետ և աջակցեն կարտոֆիլագործներին՝ հնարավորինս մատչելի պայմաններով և մեծ խմբաքանակով ձեռք բերել պարարտանյութը:

Իգնատի Առաքելյանը, անդրադառնալով կարտոֆիլի արտահանմանը, նշեց, որ նախարարության մասնագետները կուսումնասիրեն կարտոֆիլ ներկրող երկրների շուկաները, առկա գնային քաղաքականությունն ու տրոտերը, կկազմեն կարտոֆիլի արտահանման զարգացմանը միտված ծրագիր և կներկայացնեն ներկաներին:

Խորհրդակցության մասնակիցները պայմանավորվեցին առաջիկայում դարձյալ հանդիպել՝ բարձրացված խնդիրների շուրջ հետագա անելիքները քննարկելու նպատակով:

ԸՆԴՈՒՆԵԼՈՒԹՅՈՒՆ

Հանրային քաղաքականության նոր ծրագրեր

ՀՀ գյուղատնտեսության նախարար Իգնատի Առաքելյանն ընդունել է Իրավաբանների հայկական ասոցիացիայի (ԻՀԱ) պատվիրակությանը, որը գլխավորում էր ասոցիացիայի նախագահ Կարեն Չադոյանը: Հանդիպման նպատակն էր՝ ուղղվածել գյուղատնտեսության ոլորտի առաջնային խնդիրները և իրականացվող ծրագրերի շրջանակում, քննարկել ՀՀ գյուղատնտեսության նախարարության հետ համագործակցության հնարավոր եզրերը:

Հանդիպման սկզբում Կարեն Չադոյանը տեղեկացրել է, որ ասոցիացիան Եվրոպական Միության օժանդակությամբ, մի շարք գործընկեր կազմակերպությունների հետ համատեղ, Հայաստանի մարզերում իրականացնում է 34 ամիս տևողությամբ «Կառուցողական երկխոսության հանձնառություն» ծրագիրը, որը մեկնարկել է 2016 թվականի դեկտեմբերին: Նա նշել է, որ ծրագրի հիմնական նպատակն է՝ վեր հանել մի շարք ոլորտներում, այդ թվում՝ նաև գյուղատնտեսության բնագավառում առկա խնդիրները և քաղաքացիական հասարակության ներգրավմամբ, մշակել հանրային քաղաքականության նոր ծրագրեր:

Նրա խոսքով՝ ծրագրով նախատեսվում է, մասնավորապես՝ Սյունիքի, Գեղարքունիքի, Լոռու և Շիրակի մարզերում փորձագիտական օժանդակության միջոցով նպաստել այդ թվում գյուղատնտեսության ոլորտում հասարակական կազմակերպությունների ձևավորմանը և բնագավառի քաղաքականության մշակման և իրականացման գործընթացում դրանց մասնակցության ապահովմանը:

ՀՀ գյուղատնտեսության նախարար Իգնատի Առաքելյանը ողջունել է ասոցիացիայի



կամ են գործուն աջակցություն ցուցաբերել, որպեսզի աշխատանքներն ավելի արդյունավետ և սեղմ ժամկետներում իրականացվեն:

«Այսօր գյուղատնտեսության ոլորտում կան առանձին օրենքներ, բազմաթիվ հայեցակարգեր, որոնք թույլ չեն տալիս ապահովել ոլորտի միասնական կարգավորումը: Հնարավորության դեպքում մենք պատրաստ ենք միավորել այս խնդրի լուծմամբ շահագրգռված բոլոր ուժերին, նաև քայլեր ձեռնարկել խնդրի ուսումնասիրման շուրջ», - նշել է նախարար Իգնատի Առաքելյանը: Քննարկվել են նաև երկրորդ հետաքրքրություն ներկայացնող այլ հարցեր:

ՄԱՍՈՒՆԻ ԱՍՈՒՆԻՍ

Պետական աջակցության ծրագրերի արդյունքում տնտեսվել են գումարներ, որոնք կուղղվեն գյուղտեխնիկայի սուբսիդավորմանը

ՀՀ գյուղատնտեսության նախարար Իգնատի Առաքելյանի մամուլի ասուլիսի ընթացքում ներկայացվել են 2017 թվականին իրականացվող պետական աջակցության ծրագրերը և ընթացիկ խնդիրները:

Նախարարը նշել է, որ պետական աջակցության ծրագրերով անցկացված մրցույթների արդյունքում՝ ընթացիկ տարում հնարավոր է եղել գումարներ տնտեսել, որոնք կուղղվեն նոր ծրագրի՝ գյուղտեխնիկայի ձեռքբերման սուբսիդավորմանը: Մասնավորապես «Գյուղատնտեսական կենդանիների պատվաստում» ծրագրի շրջանակում տարբեր ախտորոշիչ և համաճարակային միջոցառումներ կատարելու համար պատվաստանյութերի ձեռքբերման նպատակով նախատեսված 456 մլն դրամից բանակցությունների արդյունքում տնտեսվել է շուրջ 30 մլն դրամը: «Եթե նախորդ տարի ՀՀ գյուղատնտեսության նախարարությունը տրամադրել էր 4 մլրդ դրամի բյուջետային վարկ՝ պարարտանյութ ներկրելու և մոտ 2 մլրդ 110 մլն դրամ սուբսիդավորման համար, ապա ընթացիկ տարում պարարտանյութերի տրամադրման ծրագրի սուբսիդավորմանը նախատեսվում է ուղղել ընդամենը 900 մլն դրամ, ինչի արդյունքում հնարավոր կլինի տնտեսել մոտ 1 մլրդ 200 մլն դրամ», - նշել է նախարարը:

Իգնատի Առաքելյանի տեղեկացմամբ՝ պարարտանյութերի մատակարարման մրցույթում հաղթող են ճանաչվել նվազագույն գնային առաջարկ ներկայացրած Մասիսի «Բերրիություն», ռուսական «Տորգովյ ղոմ Դոնսկոյ Ագրոխիմ-ցենտր» և իրանական պարարտանյութ ներմուծող «Բարան գրուպ» ընկերությունները: Սուբսիդավորման արդյունքում պարարտանյութը գյուղացիական տնտեսություններին կտրամադրվի նախորդ տարվա գներով:

Անդրադառնալով մթերման դիմաց պարտ-

քերի վճարումներին՝ նախարարը նշել է, որ այս պահի դրությամբ, ընդհանուր պարտքը, ըստ մթերողների ներկայացրած տվյալների, կազմում է շուրջ 1 մլրդ 467 մլն դրամ: Նախարարը հավաստիացրել է՝ գյուղատնտեսության նախարարությունը մշտական կապի մեջ է մթերող կազմակերպությունների հետ և հետևում է մարումների գործընթացին, կազմված է մարումների ժամանակացույց, համաձայն որի մինչև հունիս ամիս պարտքերի 90 տոկոսն արդեն մարված կլինի (փետրվարին՝ շուրջ 586 մլն, մարտին՝ 415 մլն, ապրիլին՝ 160 և այլն):

Իգնատի Առաքելյանը լավ նորություն ուներ «Վինար» ընկերության պարտատերերի համար. նրանք շուտով ամբողջությամբ կստանան իրենց հասանելիք գումարները: Դատախազությունից, որը Գյուղնախարարության միջնորդությամբ քննում է «Վինարի» գործը, օրերս տեղեկացրել են, որ այս պահին գործարանի պահեստներում առկա է 12 հազար դեկալիտր սպիրտ, որը ՊԵԿ-ի քննչական վարչությունը կապարակնքել է, իսկ այդ քանակը բավարարում է, որպեսզի գյուղացիական տնտեսություններին ունեցած պարտքերն ամբողջությամբ մարվեն: Նախարարի խոսքով՝ մի քանի օր ժամանակ է տրվել ընկերությանը իրացումը կազմակերպելու համար, և եթե «Վինարը» սպիրտը չիրացնի, ապա նախարարությունը դարձյալ կմիջամտի և կկազմակերպի վաճառքը:

Նախարարի տեղեկացմամբ՝ շուտով գյուղտեխնիկայի տրամադրման ծրագիրն արդեն կներկայացվի քննարկման, նախատեսվում է ապահովել շատ ցածր տոկոսադրույթներ, որպեսզի բոլոր վարկունակ գյուղացիական տնտեսությունները, կոոպերատիվները, համայնքներն առանց սահմանափակումների կարողանան ձեռք բերել իրենց անհրաժեշտ տեխնիկան:

ԿՈՈՊԵՐԱՅԻՆ

ՄՇԱԿՎՈՒՄ Է ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍԱԿԱՆ ԿՈՈՊԵՐԱՏԻՎՆԵՐԻՆ ԱԶԱՅՑՈՒԹՅԱՆ ՊԵՏԱԿԱՆ ԾՐԱԳԻՐ

Հայաստանի Հանրապետության կառավարության որոշմամբ, 2012 թվականից գյուղատնտեսության ոլորտում գերակա խնդիր է համարվել գյուղատնտեսական կոոպերատիվների ստեղծումը: Կոոպերացիայի խթանումը միտված է նպաստելու փոքր և ընտանեկան գյուղացիական տնտեսությունների եկամուտների ավելացմանը, արտադրողականության արդյունավետության բարձրացմանը, նոր տեխնոլոգիաների ներդրմանը, շուկայի և ֆինանսական ծառայությունների մատչելիությանը: «Ագրոլոգիկ» պաշտոնաթերթի հյուրն է ՀՀ ԳՆ աշխատակազմի գյուղատնտեսական կոոպերացիային աջակցության բաժնի պետ Մարիաննա Խաչատրյանը:

– Տիկին Խաչատրյան, 2014 թվականից գործում է ՀՀ ԳՆ աշխատակազմի աշխատակազմի գյուղատնտեսական կոոպերացիային աջակցության բաժինը, ինչ գերխնդիրներ ունի այն:

– Առաջնային գործառնություններից է կոոպերացիայի բնագավառը կարգավորող օրենսդրական դաշտի բարելավումը: Բաժինը մշտապես համագործակցում է կոոպերատիվների հետ և իրազեկված է վերջիններիս գործունեությանը խոչընդոտող խնդիրներին: Իրենց մտահոգիչ հարցերով մեզ հաճախ են դիմում կոոպերատիվի նախագահներ, կոոպերատիվ հիմնելու ցանկություն ունեցող անհատ ֆերմերներ, որոնց իրազեկում ենք բնագավառը կարգավորող օրենսդրական դաշտի վերաբերյալ, բարձրացված հարցերի կարգավորման նպատակով առաջարկում ենք հնարավոր լուծումներ: Բաժինը համագործակցում է նաև գյուղատնտեսական կոոպերացիայի բնագավառում գործող տեղական և միջազգային բոլոր կառույցների հետ:

– Իսկ ինչպիսին է օրենսդրական դաշտը:

– 2015 թվականը նշանավորվեց նրանով, որ դեկտեմբերի 21-ին Ազգային ժողովի կողմից ընդունվեց «Գյուղատնտեսական կոոպերատիվների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքը: Օրենքի կիրարկման կարճ ժամանակահատվածում, ՀՀ արդարադատության նախարարության աշխատակազմի իրավաբանական անձանց պետական ռեգիստրի գործակալությունում գրանցվել է 54 գյուղատնտեսական կոոպերատիվ:

Հայաստանի Հանրապետությունը դեռևս չունի գյուղատնտեսական կոոպերացիայի բնագավառը կարգավորող մեկ, ամբողջական, համապարփակ օրենք, և կոոպերատիվների բնագավառը, հիմնականում, կարգավորվում էր ՀՀ 1998 թվականի մայիսի 5-ի Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքով և մի շարք այլ իրավական ակտերով: Օրենսգրքով սահմանված են մի շարք հիմնարար կանոններ, որոնք ծառայում են կոոպերատիվների բնագավառը կարգավորող օրենսդրական այլ փաստաթղթերի համար՝ որպես ուղեցույց: Միջազգային կոոպերատիվ չափորոշիչների համաձայն՝ գյուղատնտեսական կոոպերատիվների բոլոր տեսակներն ու ձևերը՝ սկսած ծառայություններ մատուցող կոոպերատիվներից, մինչև արտադրական կոոպերատիվներ, սահմանվում են նույն չափորոշիչներով և երկրների մեծ մասում կարգավորվում են մեկ, համընդհանուր օրենքով: Օրենքի նախագիծը մշակվել է միջազգային լավագույն փորձի հիման վրա: Իրականացվել է մոտ 30 երկրների կոոպերատիվների օրենքների համեմատական վերլուծություն: Թեպետ այն սահմանափակվում է գյուղատնտեսական կոոպերատիվներով, այն կարևոր է առհասարակ կոոպերատիվների համար և կարող է հիմք հանդիսանալ ապագայում կոոպերատիվների մասին ընդհանուր օրենքի համար:

– Հասարակության կողմից ինչպես է ընկալվում կոոպերացիայի գաղափարը:

– Լրջորեն ուսումնասիրելով թե՛ զարգացած, թե՛ զարգացող երկրների փորձն ու այն համադրելով վերջին տարիներին մեր երկրում ծավալվող կոոպերատիվ շարժման առանձնահատկությունների հետ, այնուամենայնիվ, մեզանում գոյություն ունի բուն կոոպերատիվ գաղափարի ընկալման խնդիր: Դեռևս հասարակության լայն խավի կողմից կոոպերատիվ հասկացությունը ճիշտ չի ընկալվում: Հաճախ այն շփոթում են կոլտնտեսությունների (կոլխոզների) հետ: Կոոպերատիվը ոչ կոլտնտեսություն է, ոչ բաժնետիրական ընկերություն, ոչ էլ բարեգործական կազմակերպություն: Այն բիզնես է, որը, ինչպես և տնտեսական գործունեության որևէ այլ տեսակ, պարտավոր է ղեկավարվել ընդհանուր տնտեսական սկզբունքներով: Կոոպերատիվը գործունեության առանձնահատուկ տեսակ է այն պարզ պատճառով, որ այն և՛ անդամների ընկերակցություն է, և՛ ձեռնարկություն: Կոոպերատիվը պետք է դիտել որպես մասնավոր ձեռնարկատիրության այնպիսի ձև, որը պատկանում է իր անդամներին, համատեղ վերահսկվում է նրանց կողմից և ծառայություններ ու ապրանքներ մատուցում նրանց համար: Այլ խոսքով,



գյուղատնտեսական կոոպերատիվն ագրոպարենային համակարգում գործունեություն իրականացնող իրավաբանական անձի կարգավիճակ ունեցող ինքնավար, տնտեսական, անդամների հետ փոխադարձ նպատակներ ունեցող կազմակերպություն է: Կոոպերատիվի փոխադարձ նպատակը՝ ապրանքների և ծառայությունների մատակարարման միջոցով անդամների՝ սպառողների և մատակարարների շահերի բավարարումն է: Կոոպերատիվի անդամները մասնակցում են և՛ որպես սեփականատեր, և՛ որպես օգտատեր: Նրանք իրավունք ունեն մասնակցելու կոոպերատիվի նպատակների ձևակերպմանը, որոշումների կայացմանը և վերահսկման ու գնահատման գործընթացներին:

– Իսկ ինչպիսիք դերակատարություն ունեն կոոպերատիվները գյուղատնտեսության զարգացման ոլորտում:

– Կոնկրետ գյուղատնտեսության ոլորտում գործող կոոպերատիվներն ամբողջ աշխարհում վճռական դերակատարություն են ունեցել գյուղատնտեսության զարգացման գործում: Կոոպերատիվ շարժման միջազգային փորձն ակնհայտորեն վկայում է, որ կոոպերատիվներն արդյունավետ են ոչ միայն զարգացած, այլև զարգացող շուկայական տնտեսություն ունեցող երկրներում: Պատմական վկայությունները ցույց են տալիս, որ կոոպերատիվներն ավելի լավ են գոյատևում ոչ միայն ճգնաժամների ժամանակ, քան կազմակերպությունների այլ տեսակները, այլև առավել հաջողությամբ են դիմակայում ճգնաժամների ազդեցությանը: Կոոպերատիվ մոդելը մշտապես հարմարվել է փոփոխվող պայմաններին և զարգացել են տարբեր քաղաքական պայմաններ, տնտեսական զարգացման աստիճան, մշակութային բնութագրեր և պատմական հենք ունեցող երկրներում: Կոոպերատիվների հաջողության և երկարակյացության հիմնական պատճառն այն է, որ շահագրգռված են ոչ թե առավելագույնի հասցնել ներդրողների շահույթը, այլ՝ բավարարելու համայնքի կա-

րիքները:

– Ինչպես ստեղծել կոոպերատիվ, ի՞նչ պայմաններ են հարկավոր:

– Հեշտ գործ չէ կոոպերատիվի ստեղծումն ու հաջող զարգացումը: Ընդհանուր առմամբ, ժամանակատար և բարդ գործընթաց է: Դա է վկայում կոոպերացիայի զարգացման միջազգային փորձը, որտեղ այս տնտեսվարման ձևն ունի հարյուրամյակների պատմություն. այն անընդհատ կատարելագործվում է: Կոոպերատիվի հաջող զարգացման կարևոր նախապայման են կառավարական հմտություններ և ունակություններ ունեցող ուժեղ առաջնորդների ընտրությունը: Գործունեության որոշակի նպատակի շուրջ կամավոր կերպով համախմբված գյուղացիական խումբը դեռևս կոոպերատիվ չէ. սա է ցույց տալիս մեր երկրում արդեն գործող բազմաթիվ կոոպերատիվների փորձը: Կոոպերատիվը ձեռնարկության տեսակ է, համատեղ բիզնեսի ձև, որը պետք է լավ հասկանալ նախքան դրան ձեռնամուխ լինելը: Հետևաբար, երբ անհատ ֆերմերները կոոպերատիվ հիմնելու համար դիմում են մեր աջակցությանը, առաջնահերթ փորձում ենք պարզել, թե արդյո՞ք տիրապետում են կոոպերատիվ գաղափարախոսությանը:

– Որո՞նք են կոոպերատիվների ձախողման հիմնական պատճառները:

– Փորձը ցույց է տալիս, որ կոոպերատիվների ձախողման գլխավոր պատճառը անդամների ոչ լիարժեք մասնակցությունն է: Երբ կոոպերատիվի անդամները չեն մասնակցում տվյալ կոոպերատիվի աշխատանքներում, պարտավորություններ չեն ստանձնում կոոպերատիվի հանդեպ, հանձնառու չեն ընդհանուր հաջողության հարցում: Կոոպերատիվի զարգացման համար անդամները պետք է մասնակցություն ունենան հետևյալ 3 մակարդակներում՝ մասնակցություն ներդրումներով, մասնակցություն որոշումների կայացմանը և մասնակցություն ռիսկերի մեղմացմանն ու օգուտների բաշխմանը: Քանի որ կոոպերատիվները ցանկացած կազմակերպության նման կանգնած են տնտեսական և քաղաքական միջավայրին, շուկայի պայմաններին և անդամների պահանջմունքներին հարմարվելու մարտահրավերների առջև, ուստի պետք է մշտապես յուրացնեն արտադրության նոր տեխնոլոգիաներ, բիզնեսի կառավարման նոր եղանակներ, գտնել անդամների վստահությունը պահպանելու նոր ուղիներ:

– Իսկ ինչ քայլեր են արվում ՀՀ գյուղատնտեսության նախարարության կողմից՝ կոոպերատիվների ձևավորումը խթանելու ուղղությամբ:

– Ճիշտ է, այս ոլորտում դեռևս շատ անելիքներ կան, բայց մինչ այսօր ունեցած ձեռքբերումներն արդեն իսկ հուսադրող են, և կարծում եմ, քայլ առ քայլ կարող ենք հասնել անհրաժեշտ արդյունքի: Ներկայումս ՀՀ գյուղատնտեսության նախարարության կողմից մշակվում է գյուղատնտեսական կոոպերատիվներին աջակցության պետական ծրագիր, որի նպատակն է՝ պետական աջակցության մեխանիզմների միջոցով խթանել գյուղատնտեսական կոոպերատիվների զարգացումը:

Հարցազրույցը՝ Նելլի Սահակյանի

ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ

ԱՆԱՄՆԱԳԱՀՈՒԹՅԱՆ ԶԱՐԳԱՑՄԱՆ ՀՆԱՐԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐՆ ԸՆԴԱՅՆՎՈՒՄ ԵՆ

Աչաջուրը Տավուշի մարզի խոշոր համայնքներից է: Այսօրեղ բավականին շարժ են անասնապահությամբ զբաղվողները, քանի որ պայմանները նպաստավոր են: Անհանգստացողը միայն ֆինանսների բացակայությունն է:

Գյուղում արդեն կայացած, գյուղատնտեսության զարգացմանը միտված առաքելություն է իրականացնում Վալերիկ Ղալթախչյանը, ով հայտնի է հակամարտության տարիներին՝ որպես մարզի սահմանների պաշտպան, Աչաջուրի ջոկատի հրամանատար, այժմ՝ գյուղի ԵԿՄ-ի նախագահ: Հայրենասիրությունն ու աշխատանքի հանդեպ պատասխանատվությունը նրա համար նպատակ են ու ապագա: Նա ձգտում է հայրենի գյուղը տեսնել բարեկացի և ապահով: Թեև բանկային կառույցները մերժել էին գյուղվարկ ստանալու նրա հայտը՝ պատճառաբանելով տարիքային շեմը, բայց համառ ֆերմերը սեփական հնարավորություններով սկզբում գնեց 50 գլուխ ոչխար և սկսեց կամաց-կամաց ընդլայնել տնտեսությունը: Տեսնելով նրա անսահման նվիրվածությունն այդ ճյուղի հանդեպ՝ եղբոր որդին՝ Ալեքսեյ Ղալթախչյանը, որ ՌԴ-ում բավականին ճանաչված գործարար է, օգնեց ֆերմայի ձեռքբերման գործում, ավելացրեց գլխաքանակը՝ հասցնելով գրեթե 300-ի: Եվ այստեղից սկսվեց երկու նվիրյալների համատեղ գործունեությունը՝ ամեն ինչ անել՝ տնտեսությամբ:

յունը ճանաչելի դարձնելու և էկոլոգիապես մաքուր մսամթերք արտադրելու գործում: Բոգախ տեսակի ոչխարների գլխաքանակը տարեցտարի ավելացվեց, ֆերման հագեցավ նորագույն տեխնոլոգիաներով: Առաջիկայում, երբ հոտը տեղափոխվի սարամաս, տարածքը կընդլայնվի և ավելի նպաստավոր պայմաններ կստեղծվեն:

Գործարարները նպատակադրվել է նաև ստեղծել սեփական խանութը՝ էկոլոգիապես մաքուր մսամթերքն սպառողին հասցնելու համար: Արդեն ծրագրվում է ևս երկու տնտեսություն ունենալու խնդիրը՝ ճագարաբուծություն և թռչնաբուծություն:

Տնտեսության կայացման գործում մեծ ներդրում ունեն նաև Ռազմիկ և Հրայր Ղարաբանները: Առաջիկայում լրանում է Ռազմիկի 80-րդ տարեդարձը: Տարիները չեն փոխել նրան. նույն կենսուրախ, աշխատասեր և բարի մարդն է: Այս տնտեսությունում միակ խնդիրը բրդի իրացումն է: Կուտակվել է 300 կգ բուրդ: Ալեքսեյ Ղալթախչյանը թեև բավականին լայն հնարավորություններ ունի բիզնեսը զարգացնելու ՌԴ-ում, բայց նախընտրում է գումարները ներդնել հայրենի գյուղում: Նրա համար շատ կարևոր է գյուղի զարգացումը և մարդկանց համար նոր աշխատատեղերի ստեղծումը:

*Տ. Նազինյան
Տավուշի ԳԱՄԿ*

ԳՈՐԾԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

ՆՈՐ ՆԵՐԴՐՈՒՄ՝ ՄՆԴԴԻ ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅԱՆ ԳՈՐԾՈՒՄ

Հայաստանի ՓՄՁ ԶԱԿ-ի գործադիր տնօրեն Լևոն Մնացականյանը մասնակցել է ՀՀ ԳՆ սննդամթերքի անվտանգության պետական ծառայության և «Նիդերլանդների առաջատար փորձագետներ» հիմնադրամի՝ PUM-ի միջև հուշագրի ստորագրման արարողությանը: Փաստաթուղթը ստորագրել են ՍԱՊԾ պետ Իշխան Կարապետյանը և PUM կազմակերպության Հայաստանի կոորդինատոր Ալբերտ Վեթերինգը: Հուշագիրը Հայաստանի սննդի շղթայի տնտեսվարողների համար միջազգային փորձն ու գիտելիքները ուսումնասիրելու և գործնականում կիրառելու հնարավորությունների լայն դաշտ է ստեղծում:

Հուշագրի ստորագրմանը ներկա էր նաև ՀՀ-ում Նիդերլանդների Թագավորության արտակարգ և լիազոր դեսպան (նստավայրը՝ Թբիլիսի) Յոս Դաուման, ՍԱՊԾ պետի տեղակալ Լուսինե Դավթյանը, սննդամթերքի անվտանգության և որակի հսկողության տեսչության պետ Վահե Դանիելյանը, ինչպես նաև ՓԱՄ հիմնադրամի հայաստանյան ներկայացուցիչ Սուրեն Խուդավերդյանը:

PUM-ը շահույթ չհետապնդող կազմակերպություն է, որն իր ավելի քան 3.000 կամավոր-փորձագետների կարճաժամկետ խորհրդատվական առաքելությունների միջոցով, աջակցում է գործարարությանը զարգա-

ցող երկրներում՝ նպաստելով փոքր և միջին ձեռնարկությունների զարգացմանը: Հայաստանի ՓՄՁ ԶԱԿ-ի և PUM-ի միջև նույնպես ստորագրվել է փոխըմբռնման հուշագիր, որով հոլանդացի ավագ փորձագետներն իրենց գիտելիքն ու փորձն են կիսելու հայ գործարարների հետ: ՍԱՊԾ ղեկավարը կարևորել է տնտեսավարողներին՝ պետական վերահսկողության շրջանակներում նախևառաջ համապատասխան մասնագիտական գիտելիքներով ու խորհրդատվությամբ ապահովելու անհրաժեշտությունը: «Այս հուշագրով ամրագրվող համագործակցության հիմնական նպատակն է՝ աջակցել այն տնտեսավարողներին, որոնց մոտ, պետական վերահսկողության իրականացման արդյունքում, հայտնաբերվել են խախտումներ, թերություններ, շեղումներ: Հոլանդացի բարձրակարգ փորձագետների ներգրավումը, նրանց կուտակած երկարատև փորձի, գիտելիքների ու հմտությունների օգտագործումը սննդամթերքի անվտանգության ոլորտում ցանկալի արդյունքի հասնելու լրացուցիչ հնարավորություն է», - ասել է Իշխան Կարապետյանը:

Ալբերտ Վեթերինգը հավաստիացրել է, որ իրենց կողմից ոչ միայն կբավարարվեն հրավիրվող փորձագետին ներկայացվող պահանջները, այլև երաշխավորել, որ ակնկալվող արդյունքները կլինեն գոհացուցիչ: Այդ մասին են վկայում Հայաստանում հաջողությամբ



իրականացված 53 գործարար ծրագրերը: Նա նշել է, որ սննդամթերքի անվտանգությունը կազմակերպության հիմնական թիրախներից մեկն է, և գոհունակություն է հայտնել, որ Հայաստանի կառավարությունն առաջնորդվում է ոչ թե տնտեսավարողներին պատժելու, այլ՝ մասնագիտական աջակցություն ցուցաբերելու սկզբունքով: Դեսպան Իոս Դաումանը ողջունել է որակի միջազգային չափանիշների ներդրմանն ուղղված քայլերը և ուշագրավ համարել, որ հուշագրի ստորագրման օրը լրանում է նաև երկու երկրների միջև համագործակցության 25 տարին:

www.smednc.am

ՖԵՐՄԵՐԱՅԻՆ ՏՆՏԵՍՈՒԹՅՈՒՆ

ՃԱԳԱՐԱԲՈՒԾՈՒԹՅՈՒՆԸ ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍԱԿԱՆ ԱՐԱԳ ԶԱՐԳԱՑՈՂ ՃՅՈՒՂԵՐԻՑ ՄԵԿՆ Է

Դավիթ Դավթյանը, ավարտելով ՀԱԱՀ-ի անասնաբուժական ֆակուլտետը, ձեռնամուխ է եղել տնամերձ ճագարաբուծության զարգացմանը: Տնտեսությունում բուծվում են բացառապես մաքրացել կենդանիներ, որոնց գլխաքանակն օրեցօր ավելանում է:

Այստեղ աճեցվող մաքրացել կենդանիները մեծ պահանջարկ են վայելում ֆերմերային այն տնտեսությունների կողմից, որոնք նախատեսում են զբաղվել տոհմային ճագարաբուծությամբ: «Տնամերձ ճագարաբուծությունը Հայաստանում պետք է զարգանա, քանի որ այդպիսով ստեղծվում են նոր աշխատատեղեր, լուծվում է զբաղվածության խնդիրը: Ճյուղով կարող են զբաղվել նույնիսկ այնպիսի անձիք, ովքեր այլ աշխատանք ունեն, քանի որ ճագարաբուծությունն այնքան էլ աշխատատար չէ: Փոքրիկ տնտեսությունները, որոնցում կարելի է բուծել առնվազն 25-30 մայր, հնարավորություն են տալիս բավարարել ոչ միայն ընտանիքի

իր էներգիան, որը կենդանին հետ է վերադարձնում՝ արտադրանքի տեսքով: Ուստի, աշխատանքները պետք է մասնագիտորեն այնպես կազմակերպել, որպեսզի արդյունքը մեծ լինի, իսկ ճյուղով զբաղվելը դառնա արդյունավետ: Առաջին պայմանն այն է, որ գործին պետք է մոտենալ սիրով, քանի որ աշխատում ես կենդանու հետ», - նշում է Դավիթը, ապա հավելում, որ թեև ճագարաբուծությունը պահանջում է մեծ ներդրումներ, այնուամենայնիվ, միաժամանակ ապահովում է նաև բարձր արդյունք: Իսկ դրա համար անասնագետում պետք է ապահովվել բավարար պայմաններ, դրանք պետք է լինեն հարմարեցված: Օրինակ, օդը մշտապես պետք է լինի մաքուր, ոչ շատ խիտ, պարտադիր պետք է գործի օդափոխման համակարգը: Այլ կերպ ասած՝ ճագարների բուծման համար պետք է ապահովվել համալիր պայմաններ: «Առաջին հերթին պետք է ճիշտ ձևով կառուցել և հարմար տեղում տեղադրել վանդակները: Իսկ դրա համար ֆերմերը պետք է նախապես որոշի, թե ճագարաբուծության իր ուղղությունն է զարգացնելու, քանի որ միմյանցից միանգամայն տարբերվում են մսի արտադրության կազմակերպումը, մայրական կազմի բուծումը, ծագերի արտադրությունը և այլն», - ավելացնում է փորձառու մասնագետը:

Մասնագետները կարևորում են նաև այն հանգամանքը, որ ճագարների համար պետք է ստեղծվեն այնպիսի պայմաններ, որպեսզի կենդանին չմատնվի խուճապի, քանի որ այն շատ բնորոշ է այս կենդանիներին, ինչը պայմանավորված է վերջիններիս ֆիզիոլոգիական կառուցվածքով: Բացի այդ, պետք է լիարժեք պայմաններ ստեղծվեն կենդանիների արտաթորանքի արագ հեռացման համար, որպեսզի օդի մեջ գազային գոյացությունները չզերազանցեն թոյլատրելի սահմանը, դրա հետևանքով կարող են լինել թունավորման դեպքեր: Նոր հիմնադրվող տնտեսություններին ֆերմերն ապահովում է մասնագիտական խորհրդատվությամբ, նույնիսկ տրամադրում է անասնագետի կառուցման սխեման, անհրաժեշտ օժանդակ սարքավորումներ, պարագաներ, կերատեսակներ և այլն: Անաս-

նաշենքը գծագրելիս կարևորվում է այն հանգամանքը, որ բոլոր տարածքներն օգտագործվեն արդյունավետորեն:

«Առողջ կենդանիներ ունենալու համար գլխաքանակը միանշանակ պետք է ձեռք բերել տոհմային տնտեսություններից, որպեսզի հնարավորություն ընձեռվի բարձր եկամտաբերության ապահովումը: Տոհմային տնտեսություններում ճիշտ է ընտրվում մայրական կազմը՝ հաշվի առնելով կենդանիների գենետիկական առանձնահատկությունները: Որպես մայր՝ ընտրում ենք սովորաբար հանգիստ, խաղաղ պահվածք ունեցող կենդանիներին: Այնուհետև, առաջին և երկրորդ ծներից հետո ևս կատարվում է զտում՝ ընտրվում է մայրական կազմի հիմնական գլխաքանակը», - պատմում



է ֆերմերը, ապա հավելում, որ առողջ կենդանիներ ծնվում են առողջ մորից: Այս հանգամանքներով է պայմանավորված տոհմային տնտեսությունների առավելությունները: Նրա տեղեկացմամբ, մայրական կազմի ընտրության հարցում, կարևորվում է նաև կենդանու կաթնատվությունը, որը կարող է տևել 60 օր: Լիարժեք կաթնատվության պարագայում ծագերը երկու ամիս շարունակ սնվում են մայրական կաթով, ինչի շնորհիվ դրանք լինում են առողջ, իսկ հիվանդությունների նկատմամբ ցուցաբերում են մեծ դիմադրողականություն:

Ուշագրավն այն է, որ այդ ժամանակահատվածում կենդանին ընդունում է մայրական բնագոյնը: Այնուհետև ծագերն առանձնացվում են և համարակալվում:

«Ֆերմերի առաջնահերթ խնդիրն այն է, որ առավելագույն նվազեցնի ռիսկերը՝ ժամանակին կատարելով բոլոր անհրաժեշտ կանխարգելիչ միջոցառումները՝ միաժամանակ ապահովելով կենդանու լավագույն պահվածքի համար պահանջվող բոլոր պայմանները», - կարևորում է Դավիթը: Կարևորվում է նաև կենդանիների լիարժեք կերակրումը, որի համար այս տնտեսությունում ստեղծվել են բոլոր անհրաժեշտ պայմանները: Ի դեպ, Դավիթը նախատեսել է կազմակերպել խորհրդատվական դասընթացներ՝ սկսնակ ճագարաբուծների համար: Ինչ վերաբերում է ճագարի բարձրարժեք մսին, ապա վերջինիս պահանջարկը մի քանի անգամ գերազանցում է առաջարկին, այսինքն կարող է իրացվել այնքան, որքան կարտադրվի: Ճագարի միսը լավագույն սննդամթերք է հանդիսանում շաքարային դիաբետով հիվանդների, ինչպես նաև երեխաների համար: Մսի շուկայական գինը ևս նպաստավոր է տնտեսությունների զարգացման համար:

«Ճագարաբուծությունը գյուղատնտեսական արագ զարգացող ճյուղերից մեկն է, որին պետք է ցուցաբերել ոչ միայն անհատական, այլև՝ պետական մոտեցում: Այս ճյուղի առաջընթացի համար ևս պետք է գործեն պետական ծրագրեր՝ ինչպես, օրինակ՝ տավարաբուծության, ոչխարաբուծության և այլ ճյուղերի զարգացման համար», - նշում է Դավիթը, ապա հավելում, որ ճագարաբուծությունը Հայաստանում եղել է ավանդական ճյուղերից մեկը և ունի զարգացման մեծ հեռանկարայնություն: Այսօր խնդիր չկա նաև՝ կապված պատվաստանյութերի ձեռքբերման հետ (ինչպես տարիներ առաջ էր), քանի որ հանրապետությունում ապահովվում է անհրաժեշտ քանակությամբ պատվաստանյութերով, որոնք ունեն մեծ արդյունավետություն: Ի դեպ, տնտեսությունում կազմակերպվում է նաև մատչելի գներով տոհմային ճագարամայրերի վաճառք:

Նելլի Սահակյան



մսի պահանջարկը, այլև իրականացնել վաճառք», - այս եզրահանգման է եկել Դավիթ Դավթյանը:

Ֆերմերը կարևորում է մասնագիտական մոտեցումը՝ տնտեսության զարգացման առումով: Այսպես, օրինակ, անասնագետները, որոնցում պահվում են կենդանիները, պետք է ունենան բավարար ջերմաստիճան: «Զբաղվելով ճագարաբուծությամբ՝ ֆերմերը ներդնում է

ԿՈՈՊԵՐԱՑԻԱ

ՀԻՄՆԱԴՐՎԵՑ ԱՌԱՋԻՆ «ՕՐԳԱՆԱԿԱՆ ՄԻՐԳ ԱՐՏԱԴՐՈՂՆԵՐԻ» ՍՊԱՌՈՂԱԿԱՆ ԿՈՈՊԵՐԱՏԻՎԸ

2016թ. OASI (Ավստրիական զարգացման ծրագրի) շրջանակներում մեկնարկել է «Օրգանական մրգի արտադրության ընդլայնում» օրգանական այգիների կառավարման բարելավման և գյուղացիներին օրգանական գյուղատնտեսական կոոպերատիվի մեջ ընդգրկելու միջոցով» գրանտային ծրագիրը: Ծրագիրն իրականացնում է օրգանական պրոդյուսերության զբաղվող «Ծիրանի այգի» ՍՊԸ-ն և համաֆինասավորվում է Շեն ԲՀԿ կողմից:



2011-2015 թթ. ընթացքում, օրգանական գյուղատնտեսության զարգացման միտումներն ակնհայտ դարձան, երբ Հայկական վերամշակող ձեռնարկությունները, արտահանողները, ինչպես նաև գյուղատնտեսական ներդրանք ներմուծողները փորձում էին ունենալ իրենց օրգանական արտադրանքը և դուրս գալ արտաքին շուկա: Վերամշակող ընկերությունների գրեթե կեսն արտադրում էր տարբեր օրգանական արտադրանք՝ հիմնականում հյուսիս, խյուս, չորացրած մրգեր և թեյեր:

Սակայն պատկերն այլ է օրգանական հումքի արտադրության ոլորտում՝ այդ հումքի քանակը սահմանափակ է: Որպեսզի ֆերմերը մտնի օրգանական համակարգ և ձեռք բերի հավաստագիր, առնվազն

2-3 տարվա անցումային ժամանակաշրջան է անհրաժեշտ: Այսօր վերամշակող ընկերություններն ու կառավարությունը պատրաստ չեն աջակցել ֆերմերներին և անցումային շրջանում նրանց հետ կիսել պարտադիր օրգանական սերտիֆիկացման ծախսը: Դեպի օրգանական արտադրության անցման ծախսերն ու ռիսկերը մնում են ֆերմերների ուսերին, ովքեր ի վիճակի չեն ինքնուրույն իրականացնել դրանք: Սա է պատճառը, որ այսօր այգեգործությամբ զբաղվող շատ ֆերմերներ չեն կարողանում մուտք գործել օրգանական արտադրության համակարգ:

Ծրագրի հիմնական նպատակն է՝ նպաստել ՀՀ-ում օրգանական գյուղատնտեսության, մասնավորապես՝ պտղաբուծության զարգացմանը: Ծրագրի շրջանակներում նախատեսվում է Արմավիրի (Բաղրամյանի տարածաշրջանի) և Արագածոտնի մարզերից 15-20 ֆերմերների (մոտ 50 հա) ընդգրկել օրգանական արտադրության մեջ՝ նրանց միավորելով կոոպերատիվի մեջ: Կոոպերատիվի անդամների համար կկիրառվի խմբային սերտիֆիկացիա, որը կօգնի նվազեցնել սերտիֆիկացման ծախսերը յուրաքանչյուր տնտեսության համար:

«Ծիրանի Այգի» ՍՊԸ-ի նպատակն է՝ ցույց տալ իր սեփական դրական փորձը և հանդես գալ ֆերմերների մոտ՝ որպես օրգանական արտադրություն առաջ տանող շարժիչ ուժ, որը կօգնի ավելի մեծ թվով ֆերմերների ներգրավել օրգանական արտադրության մեջ:

«Ծիրանի Այգի» ՍՊԸ-ն առաջին օրգանական պտուղն արտադրող գյուղացիական տնտեսություններից մեկն է: Այգիները ստեղծվել են դեռևս 2001-2003 թվականներին, մի շարք միջազգային կազմակերպությունների և Շեն ՀԿ-ի թեմատիկ աջակցությամբ: Հենց սկզբից գաղափարը մեկն էր՝ նոր օրգանական այգիներ տնկել և օրգանական մրգի արտադրության միջոցով լրացուցիչ եկամուտ ապահովել:

Այսօր ՀՀ-ում օրգանիկ այգիների հիմնադրման համար բացակայող մատակարար շղակներից մեկը նաև պտղատու ծառերի օրգանիկ տնկանյութի բացա-

կայությունն է: Օրգանիկ նորատունկ այգիների հիմնման կամ առկա այգիների լրացումների համար ստիպված են օգտագործել ավանդական եղանակով աճեցված տնկիներ: «Ծիրանի այգի» ՍՊԸ նախատեսում է ստանձնել օրգանիկ տնկիների աճեցման տնկարանի հիմնման աշխատանքները: Քանի որ ՍՊԸ հանդիսանում է արդեն իսկ սերտիֆիկացված տնտեսություն, ապա նա կարող է 1.5 տարվա աշխատանքից հետո ֆերմերներին վաճառել օրգանական տնկանյութ: Օրգանիկ տնկիների օգնությամբ հնարավոր է նպաստել նոր օրգանիկ այգիների մակերեսների ընդլայնմանը և կրճատել կամ թեթևացնել սերտիֆիկացման գործընթացը՝ նոր հիմնադրվող այգիների համար:

Ս/թ. փետրվարի 18-ին Արմավիրի մարզի Շենիկ գյուղում կայացավ առաջին «Օրգանական միրգ արտադրողների» սպառողական կոոպերատիվի հիմնադիր ժողովը: Այն վարում էր Շեն ԲՀԿ կողմից հրավիրված կոոպերացիայի փորձագետը: Առաջին օրգանական միրգ արտադրողների կոոպերատիվին անդամակցել է 17 ֆերմեր, որոնք ունեն 1-5 հա պտղատու այգիներ: «Օրգանական միրգ արտադրողների» սպառողական կոոպերատիվին անդամակցելու առաջին և հիմնական նախապայմանը՝ սերտիֆիկացված օրգանական արտադրության վարումն է: Առաջիկա 2 տարիների ընթացքում կոոպերատիվի բոլոր անդամներն ամբողջությամբ կփոխեն իրենց տնտեսավարման ամբողջ համակարգը՝ օրգանական սերտիֆիկացման պահանջների համաձայն:

Շեն-ի գյուղատնտեսական խմբի կողմից լինելու է ընթացիկ խորհրդատվություն: Արդեն իսկ կազմվել են օրգանիկ այգիների խնամքի և բուժման անհատական գրաֆիկներ, որոնք տրամադրվել են կոոպերատիվի անդամներին: Տասնյակ տարիների պրակտիկ փորձ ունեցող Շեն-ի գյուղատնտեսական խումբը և «Ծիրանի Այգի» ՍՊԸ-ն պատրաստ են աջակցել կոոպերատիվի բոլոր անդամներին՝ ավանդականից օրգանական արտադրության անցումը մեղմելու համար:

Նվարդ Շահմուրադյան
Շեն ԲՀԿ

ԱՐՏԱԴՐՈՒԹՅՈՒՆ

ՕՐԳԱՆԱԿԱՆ ԶՎԻ ԱՐՏԱԴՐՈՒԹՅՈՒՆ ՈՍԿԵՎԱԶՈՒՄ

Ձուն ամենասնդարար մթերքներից մեկն է, նրանում պարունակող օգտակար վիտամիններն ու սննդանյութերն ապահովում են օրգանիզմի կայուն աճն ու զարգացումը՝ միաժամանակ հեռու պահելով հիվանդություններից:



Զվի օգտակար հատկանիշներն ամբողջովին պահպանվում են, երբ հավերը պահվում են ազատ պայմաններում և սնվում լիարժեք, բնական ծագմամբ հատիկային մշակաբույսերով (ցորեն, գարի, եգիպտացորեն), ունեն մշտական կանաչ արոտի հնարավորություն:

Բնակչության մեջ՝ ձվի հանդեպ պահանջարկի ավելացման պատճառով, լայն թափ ստացավ ձվի արտադրությունը ոչ ավանդական եղանակով, ստեղծվեցին հզոր թռչնաֆաբրիկաներ, որոնք

ամբողջությամբ գրավեցին ձվի շուկան՝ աստիճանաբար դուրս մղելով ավանդական թռչնաբուծությամբ զբաղվող մանր գյուղացիական տնտեսություններին: Սակայն ոչ ավանդական եղանակով վանդակային պահվածքի պայմաններում ստացվող մթերքը որակական հատկանիշներով զգալիորեն զիջում է օրգանական ձվին, քանի որ թռչունները, արևի բացակայության պատճառով, չեն ստնում ամենանհրաժեշտ վիտամինները՝ հատկապես վիտամին D:

Արևի և կանաչ տարածքում զբոսնելու հնարավորության բացակայությունը զգալիորեն բացասաբար է ազ-

դում թռչունների դիմադրողականության վրա, այդ պատճառով թռչունների կերաբաժնի մեջ կանոնավոր կերպով ավելացնում են հակաբիոտիկներ, իսկ դրա հետևանքով ստացված սննդամթերքը դառնում է վնասակար օգտագործման համար:

Վերջին տարիներին ամբողջ աշխարհում խրախուսվում է ավանդական եղանակով ձվի արտադրությունը, գոյություն ունեն հստակ կանոններ, որոնք անպայման պետք է պահպանվի, եթե

սննդի փաթեթավորման վրա նշված է Օրգանական պիտակը: Հաշվի առնելով օրգանական ձվի հանդեպ բնակչության աճող պահանջարկը՝ անհատ ձեռներեց Արամայիս Սահակյանն իր ընտանիքի հետ միասին 2006 թվականից ձեռնարկել է օրգանական ձվի արտադրություն Արագածոտնի մարզի Ոսկեվազ գյուղում:

Երկարատև ներդրումներից և տարիների ընթացքում փորձ ձեռքբերելուց հետո, Սահակյանների ընտանիքը որոշեց ներկայանալ սեփական ապրանքանիշով, որն անվանվեց «Farm Food»՝ այսինքն ֆերմային ձվի արտադրություն: Չնայած թռչունները պահվում են ազատ պայմաններում, սակայն տնտեսությունում բուծվում են բացառապես Երևանյան կարմիր ցեղի թռչուններ, որոնց խնամքն իրականացվում է ֆերմայի տարածքում սկսած մեկ օրեկանից:

Թռչունների խնամքն իրականացվում է՝ օգտագործելով Ռուսաստանի Դաշնության առաջատար ֆերմերային տնտեսությունների փորձը: Թռչունները կերակրվում են սեփական բաղադրատոմսով պատրաստված կերպով՝ միմիայն հատիկային մշակաբույսերով՝ կանաչ կամ չորացված խոտով: Ֆերմայում առկա են թռչունների առողջ խնամքի համար նախատեսված շինություններ և ամենակարևորը՝ խմելու մաքուր ջուր, որը հաղորդում է ձվին

և թռչնամսին յուրահատուկ համ:

Բավարար շենքային պայմանները թույլ են տալիս ապահովել կայուն ջերմաստիճան՝ թռչունների համար աշնան և ձմռան ամիսներին, ինչի շնորհիվ, ամբողջ տարվա ընթացքում, տնտեսությունում ստանում են որակյալ և թարմ հավ-կիթ՝ ի տարբերություն տնական պայմաններում պահվող հավերի:

Մոտակա տարիներին տնտեսությունը մտադիր է զգալիորեն ավելացնել թռչունների թևաքանակը, նաև ձեռնարկել օրգանական թռչնամսի արտադրություն, քանի որ երևանյան կարմիր



ցեղատեսակի թռչունները համարվում են մսաձվատու: Տնտեսությունն աշխատում է գրեթե առանց վարկային միջոցների ներգրավվածության՝ սեփական եկամուտների հաշվին:

Դավիթ Սահակյան
Ֆերմեր

ԿՐԹԱԿԱՆ

ԿՐԹԱԿԱՆ ԾՐԱԳՐԻ ԱՎԱՐՏԱԿԱՆ ՀԱՎԱՍՏԱԳՐԵՐ

Հայաստանի սննդամթերքի մատակարարման արժեզրթան ավելի անվտանգ հեռանկար ունի՝ շնորհիվ հատուկ կրթական ծրագրի, որը կյանքի է կոչվել ԱՄՆ Միջազգային զարգացման գործակալության (ԱՄՆ ՄՀԳ) աջակցությամբ՝ ԱՄՆ Վիրջինիա Թեք և Փենսիլվանիայի նահանգային համալսարանների և Հայաստանի ազգային ագրարային համալսարանի միջև կնքված համագործակցության հուշագրերի շրջանակում:



Վերջերս ՀԱԱՀ Ազդրբիզնեսի ուսուցման կենտրոնի բակլավալրիատի ավագ կուրսի 29 ուսանող և Ազդրբիզնեսի հետազոտությունների և կրթության միջազգային կենտրոն (ICARE) հիմնադրամի մեկ աշխատակից ստացան Փենսիլվանիայի նահանգային (ՓենՍտեյթ) համալսարանի հավաստագրեր՝ «Սննդի անվտանգության համակարգերի կառավարում» թեմայով՝ Հայաստանում առաջին կրթական ծրագիրը հաջողությամբ ավարտելու կապակցությամբ: Հավաստագրային ինտենսիվ ծրագիրը նպատակաուղղված է Հայաստանում սննդամթերքի մատակարարման շղթայի անվտանգության բարելավմանը՝ սննդի վերամշակումից ու փաթեթավորումից մինչև պահպանում, շուկայահանում և սպառում:

Զորս շաբաթվա ընթացքում ծրագրի մասնակիցները ձեռք բերեցին սննդագիտության և սննդի անվտանգության ոլորտում ամենավերջին գիտական հետազոտությունների արդյունքների վրա հիմնված գիտելիքներ: Լաբորատոր պարապմունքները և դասախոսությունները ներառում էին վեց մոդուլներ՝ Սննդագիտության հիմունքներ, Սանիտարիա, Սննդի միկրոկենսաբանություն, Վերամշակման վերահսկողություն և թթվեցված սննդամթերք, HACCP համակարգ, Սննդամթերքի պաշտպանություն: Մոդուլների դասավանդումը զուգորդվում էր վերամշակող ձեռնարկություններ՝ Արմենիա Վայն, Նոյան, Մարիաննա և այլ ընկերություններ ուսումնաճանաչողական այցելություններով: Այս ամենը ուսանողների հաղորդեց գործնական փորձառություն և Հայաստանի սննդի անվտանգության ոլորտի հետագա առաջընթացի համար անհրաժեշտ հմտություններ: Ազոդեփոփեսի ուսուցման կենտրոնի հավաստագրային

այս ծրագիրը կյանքի է կոչվել ԱՄՆ ՄՏԳ-ի կողմից ֆինանսավորվող «Նորարարություն հանուն գյուղատնտեսական կրթության և վերապատրաստման» (InnovATE) ծրագրի միջոցով:

Հավաստագրերի հանձնման արարողությանը ներկա էին՝ ՀՀ գյուղատնտեսության նախարար Իզնատի Առաքելյանը և գյուղնախարարության սննդի անվտանգության պետական տեսչության պետ Իշխան Կարապետյանը։ Նախարար Ի. Առաքելյանը ջերմորեն շնորհավորեց «Սննդի անվտանգության համակարգերի կառավարում» ծրագրի առաջին դասընթացի շրջանավարտներին՝ հույս հայտնելով, որ Ագրոքիզնեսի ուսուցման կենտրոնի բակալավրիատի ավարտական կուրսի ուսանողները մոտ ապագայում իրենց ծանրակշիռ խոսքը կասեն սննդի անվտանգության կարևորագույն բնագավառում։ Նախարարը մասնավորապես նշել է. «Շատ կարևոր է, որ այս դասընթացի ժամանակ ձեռք բերած գիտելիքները կիրառելի դարձնեք գործնականում և նոր մշակույթ բերեք մեր իրականությանը»։ Ի. Առաքելյանը պատրաստակամություն է հայտնել ծրագիրն ավարտած ուսանողներից լավագույնների աշխատանքի հնարավորություն ընձեռել ՍԱՊՏ-ում՝ բուհն ավարտվող հետո։

Իր ողջույնի խոսքում ԱՄՆ ՄԶԳ հայաստանյան առաքելության տնօրեն Դերոբա Գրիգերը նշեց, որ Ագրոբիզնեսի հետազոտությունների և կրթության միջազգային կենտրոնը (ICARE) ԱՄՆ-ի և Հայաստանի միջև եզակի համագործակցության արդյունք է: «Մենք գոհումսկությանմ ենք հետևել, թե իր գոյության 16 տարիների ընթացքում ICARE-ն ինչպիսի առաջընթաց է ապրել՝ դառնալով ագրոբիզնեսի ոլորտում միջազգային լավագույն չափորոշիչները կիրառող կարևորագույն հաստատություն: Հավաստագրային այս ծրագիրը նպատակաուղղված է Հայաստանի կառավարության և սննդի վերամշակման ձեռնարկությունների կարիքների բավարարմանը: Այն նաև ՀՀ բարձրագույն կրթության համակարգին աննախադեպ հնարավորություն է ընձեռում՝ առաջարկելու սննդի անվտանգությանն առնչվող խնդիրների իրագրելուծումներ: ԱՄՆ ՄԶԳ-ն հպարտությամբ է աջակցում այսպիսի աշխատանքներին», - ասաց տիկին Գրիգերը, հավելելով, որ ծրագիրը կնպաստի նաև ագրոբիզնեսի հատվածում աշխատատեղերի ավելացմանը:

Իր շնորհավորական ուղերձը հղելով ՀԱԱՀ-ի ԱՀԿԿԿ/ICARE հիմնադրամի հեթոթական նորարարական, միջազգային չափորոշիչների վրա հիմնված կրթական ծրագրի առաջին շրջանավարտներին՝ ՀԱԱՀ ռեկտոր, ՀՀ ԳԱԱ ակադեմիկոս Արշալույս Թարվերդյանը նշեց, որ, արժանապետելով աշխատաշուկայի այսօրվա իրական կարիքներին, համալսարանը ներկայումս իրականացնում է կրթական ծրագրերի լուրջ բարեփոխումներ։ «Այդ գործում դրական արդյունքներ կարող էինք ակնկալել՝ հատկապես համագործակցելով միջազգային կառույցների հետ։ Պետք է գոհունակությամբ նշենք, որ ԱՄՆ Միջազգային զբաղգաման գործակալությունը հնարավորություն տալովձեզ կապ հաստատել Միացյալ Նահանգների Փենսիլվանիայի նահանգային համալսարանի հետ»։

սարանի և Կիրօնիա Թեք համալսարանի հեն: Կարճ ժամանակում մշակվեց խտացված ծրագրերի մի մոդուլ, որն իրականացվեց Ագրարային համալսարանում: Հիմա արդեն, տեսնելով մեր ուսանողների ձգտումներն ու ձեռք բերած գիտելիքները, այս հնարավորությունը պետք է օգտագործենք համալսարանի մյուս մասնագիտություններում և նման սխեմայով կրթություն կազմակերպելու համար»,- նշել է Լ. Թարվերդյանը:

Դասընթացի առաջին շրջանավարտներին ավարտական վկայականներ հանձնեցին՝ ԱՄՆ ՄԶԳ հայաստանյան առաքելության տնօրեն Դեբորա Գրիգերը, ՀԱՍՀ ռեկտոր Արշալույս Թարվերյանը, ԱՀԿՄԿ/ICARE հիմնադրամի տնօրեն Վարդան Ուռուտյանը և ԻնտելեՅԻՏ-Հայաստան նախագծի տնօրեն Անջելա Նիլոնը:

Մեկամսյա դասընթացը դասավանդում էին Ին-
տվեՅԹ-Հայաստան նախագծի և ՀԱԱՀ-ի գործընկեր
համալսարանները ներկայացնող հայտնի փորձագետ
ներ՝ Վիրջինիա Թեք համալսարանի սննդագիտության
և տեխնոլոգիայի դեպարտամենտի ղեկավար դոկտ.
Ջոզեֆ Մարսին, ՓեննՍտեյթ համալսարանի սննդագի-
տության պրոֆեսոր, սննդի անվտանգության և որակի
ծրագրերի ղեկավարի տեղակալ դոկտ. Քեթրին Քաթերը
և նույն համալսարանի հետ դոկտորական հետազոտող
գիտնական դոկտ. Սիրոզ Ռուկարեյլ։ Դոկտ. Մարսին և
դոկտ. Քաթերը նախապես կազմել էին դասընթացի ու-
սումնական պլանը՝ հիմնվելով դասավանդման իրենց
փորձի և սննդի անվտանգության ոլորտի՝ Հայաստա-
նում առկա կոնկրետ կրթական կարիքների վրա։

Հավաստագրային ծրագրի շարունակականութ-
յունն ապահովելու նպատակով սննդի անվտանգության
և միկրոկենսաբանության հայաստանցի չորս փորձա-
գետներ ամերիկացի գործընկերներին օգնեցին դասըն-
թացի վարման ժամանակ: Զարուհի Դավթյանը, Սերգեյ
Զախնախյանը (Ագրոբիզնեսի և գյուղի զարգացման
կենտրոն՝ ԲԱՐԴ), Դավիթ Պիպոյանը և Մելինե Բեգ-
լարյանը (<< գիտությունների ազգային ակադեմիա)
կատանձնեցին հետազայում Ագրոբիզնեսի ուսուցման
կենտրոնում սննդի անվտանգության ծրագրի դասա-
վանդման պարտականությունը:

Համոզված եմք, որ «Մենդի անվտանգության համակարգերի կառավարում» նորարարական, Հայաստանում աննախադեպ կրթական ծրագիրը, սննդի անվտանգության առումով, գյուղատնտեսության ոլորտի և առհասարակ սպառող լայն հանրության առջև ծառացած և դեռևս անպատասխան մնացած բազմաթիվ հարցերի լավագույն պատասխանն է կրթության մակարդակում:

ԱՄՆ ՄԶԳ-ի կողմից ֆինանսավորվող ԻննովեՅԹ (InnovATE) ծրագիրն իրականացվում է ԱՄՆ չորս համալսարանների (Վիրջինիա Թեք, ՓենՍտեյթ, Թասքիգի և Ֆլորիդայի) մասնակցությամբ ստեղծված կոնսորցիումի կողմից: ԻննովեՅԹ-ի հայաստանյան նախագիծը կարևոր դերակատարություն ունի Հայաստանում գյուղատնտեսական կրթության ու վերապատրաստման բարեփոխման, ՀԱԱՀ Ագրոբիզնեսի ուսուցման կենտրոնի և Ագրոբիզնեսի հետազոտությունների և կրթության միջազգային կենտրոնի (ICARE) հաստատությունական զարգացման գործում:

ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍԱԿԱՆ ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

ԱՎԵԼԻ ԱՐԺԱՆԱՀԱՎԱՏ ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍԱԿԱՆ ՏՎՅԱԼՆԵՐ

ՀՀ ազգային վիճակագրական ծառայությունը 2016 թ. դեկտեմբերի վերջին հրապարակեց «Հայաստանի Հանրապետության 2014 թ. Գյուղատնտեսական համադարձ հաշվառման հիմնական արդյունքները» վիճակագրական ժողովածուն: Ժողովածուի շնորհանդեսին մասնակցել են ՀՀ փոխարքայապետը, գյուղատնտեսության նախարարը և Գյուղատնտեսական համադարձ հաշվառման (ԳՀՀ) ծրագրի իրականացման գործում ԱՎԾ-ին աջակցած միջազգային կառույցների (Ավստրիայի կառավարություն, Ավստրիայի զարգացման գործակալություն, ՄԱԼ գյուղդեպարտամենտ, ԵՄ, ՀԲ, ՄԱԿ-ի ՊԳԿ, ՄԱԿ-ի ԶԾ) ներկայացուցիչներ:

Հայաստանի պատմության մեջ առաջին անգամ անցկացված ԳՀՀ-ն շրջադարձային հանգրվան է երկրի տնտեսության գերակա ճյուղ հանդիսացող գյուղատնտեսության հետագա զարգացման գործում: Բուն տվյալների հավաքմանը մասնակցել է շուրջ 4.500 մարդ: Ինչպես

Արևելյան Եվրոպայի և նախկին Խորհրդային Միության անխտիր բոլոր երկրներում անցկացված առաջին համատարած հաշվառումները, այնպես էլ հայաստանյան հաշվառումը ի հայտ բերեց, ընդհանուր առմամբ, ավելի ցածր արդյունքներ, քան՝ ընթացիկ գյուղատնտեսական պաշտոնական վիճակագրությունը: Հարկ է նշել նաև, որ ժողովածուում տեղ գտած ելքային աղյուսակներում ամփոփված մեծ թվով տվյալներ և համակցություններ (ըստ էության, ժողովածուի մեջ եղած տվյալների մեծամասնությունը) նախկինում երբևէ չեն ներառվել ընթացիկ վիճակագրության մեջ: Տվյալների հավաքման, մուտքագրման, մշակման ու վերլուծության համար օգտագործվել է միջազգային չափորոշիչներին համապատասխանող արդիական մեթոդաբանություն: Այս ամենը նշանակում է, որ երկրի ագրոպարենային ոլորտը նախկինում երբևէ չի ունեցել ելակետային նման համակողմանի և արժանահավատ տվյալներ:

Ժողովածուն, ինչպես նաև գուգահե-

ռաբար լույս տեսած և լույս տեսնող փոքրածավալ, բայց բովանդակալից ու արդյունավետ թեմատիկ տեղեկատվական թերթիկները Ազգային վիճակագրական ծառայության ջանքերով աստիճանաբար դառնում են ԳՀՀ տվյալների սպառողներին վիթխարի բանակի սեփականությունը: Այդ բանակը (գյուղատնտեսության նախարարություն, այլ նախարարություններ, կառավարություն ու ՏԻՄ-եր, գյուղացիական տնտեսություններում գյուղական համայնքներ, ուսումնական ու գիտական հաստատություններ, միջազգային գործընկերներ և դոնորներ...) այժմ արդեն կարող է տիրապետել շատ ավելի «ուժեղ» թվերի, քան երբևէ:

Վերոնշյալ շնորհանդեսի ժամանակ
հնչած մի քանի գնահատականներ.
Փոխվարչապետ Վաչե Գաբրիելյան.
«Շատ կարևոր է ԳՀՀ դերը գյուղատն-
տեսական հիմնական ցուցանիշների վե-
րագնահատման գործում»:

Գյուղատնտեսության նախարար Իգնատի Առաքելյան. «ԳՀՀ-ն օգնեց բարե-

լավել ընդհանրապես գյուղատնտեսական
վիճակագրության ընդգրկումն ու որակը
մեր երկրում»:

ԱՎԾ նախագահ Ստեփան Մնացականյան. «Մեծապես կարևորում ենք արտերկրի մեր գործընկերների և հատկապես ԱՄՆ գյուղերայարտամենտի Ագգային գյուղատնտեսական վիճակագրության ծառայության փորձագետ Մայքլ Ստայների ներդրումը ԳՀՀ ընդհանուր հաջողության գործում»: Տեղական գործընկերներից պարոն Մնացականյանը նշեց Ագրոբիզնեսի հետազոտությունների և կրթության միջազգային կենտրոն (ICARE) հիմնադրամը, որն օգնում է ձևավորել ԳՀՀ ընկալումը տվյալների օգտատեր հանրության շրջանում:

ԱՎԾ-ն ներկայումս իրականացնում է ԳՀՀ տվյալների տարածման աշխատանքներ, ներառյալ «Հայաստանի Հանրապետության 2014 թ. Գյուղատնտեսական համադարձ հաշվառման հիմնական արդյունքները» վիճակագրական ժողովածուի բաշխումը սպառողների հիմնական խմբերին:

ՄԵՂՎԱԲՈՒԾՈՒԹՅՈՒՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՄԵՂՎԱԲՈՒԾՈՒԹՅԱՆ ԱՐԴԻ ԽՆԴԻՐՆԵՐԸ

Ներկայումս, Հայաստանում մեղվապահների մեծամասնությունը վարում են տնտեսություններն իրենց ավանդական մեթոդներով: Հիմնականում օգտագործում են Դադան-Բլապ փոպի փեթակներ, որոնք արդի պայմաններում արդյունավետ չեն: Մեղվապահները հազվադեպ են կիրառում Լանգստրոմ-Ռուպի բազմահարկ փեթակները և հիմնավորում, որ այդ փեթակներում մեղվաբնությանը արագ ծագարենդով է բռնկվում, սակայն խնդիրը փեթակի մեջ չէ, այլ՝ մեղվապահի չիմացությունը Լանգստրոմ-Ռուպի փոպի փեթակների հետ աշխատելիս:



Մեղվապահներին թվում է, թե իրենք ամեն ինչ գիտեն, որովհետև, օրինակ 40 տարի զբաղվում են մեղվաբուծությամբ, սակայն 40 տարի զբաղվում են ավանդական ոչ արդյունավետ մեթոդներով՝ մինչդեռ շրջակա միջավայրում կատարվող փո-

փոխությունները, նորարարություններն ու բնակլիմայական պայմանները ստիպում են տնտեսությունը վարել արդի մեթոդներով: Միայն այս տարի բավականին խոշոր մեղվախոցներ, յուրաքանչյուրն ունեցել է մոտ 300 մեղվաբնատանիքների անկումներ, այն պատճառով, որ անտեսել են մասնագետների խորհուրդները՝ պատճառաբանելով, որ իրենք փորձառու մեղվաբույծներ են և այս տարիների ընթացքում որևէ լուրջ անկումներ չեն ունեցել:

Որոշ մեղվախոցներ, բնության մեջ օժանդակ մեղրաբերքի առկայության պայմաններում, իսկ երբեմն էլ վերնահարկով մեղվաբնատանիքներին սկսում են կերակրել օշարակով, ինչը հաճախ հանգեցնում է նաև անորակ մեղր ստանալուն: Մեղվապահներն անհանգստանում են, որ չեն կարողանա ճիշտ կողմնորոշվել մեղվաբնատանիքների խնամքը և զարգացումը կազմակերպելիս, հետևաբար, կարծում են, որ իրենց օգնությունը մեղվաբնատանիքին՝ շաքարաջրի տեսքով փնաս չի տա և իրենց աշխատանքի թերությունները չեն երևա: Այս դեպքում վրա է հասնում ծագատենող, մեղվաբնատանիքների կենսունակությունն ընկնում է և տնտեսության արդյունավետությունը զգալի իջնում:

Հաջորդ կարևոր խնդիրը մեղվաբուծության մեջ՝ մեղրի արտահանումն է: Այս խնդրի պատճառները մի քանիսն են՝ բարձր գինը, մարքեթինգով չզբաղվելը, մեղվապահների անտեսումն անասնաբուժական անվտանգության պահանջներին, գլխավորապես անցանկալի դեղորայքի օգտագործումը: Մեղրը գնահատվում է 4 չափանիշներով՝ որակով, թունաքիմիկատների, աղտոտող այլ նյութերի մնացորդային քանակությամբ, համային հատկանիշներով և գույնով: Սովորաբար, եթե մեղրը կեղծված չէ, որակի առումով խնդիր չի լինում: Արտերկրում ավելի նախընտրելի է բաց գույնի մեղրը: Մեղվապահները կարծում են, որ եթե մեղրը կեղծված չէ, ուրեմն իդեալական ապրանք է, սակայն դա այդպես չէ, քանի որ արդի պահանջների համաձայն՝ մեղրը պետք է համապատասխանի նաև անասնաբուժասանիտարական պահանջներին: Այսօր մեղրը Եվրոպական Միության երկրներ արտահանելու համար գործում են անվտանգության բավականին խիստ պահանջներ 116 ցուցանիշների մասով:

Արտահանման գործընթացը հեշտացնելու նպատակով՝ մեղվապահներին խորհուրդ չենք տալիս օգտագործել «ամիպոլ-տ», «ապիտակ», «բիպին», «բիպին-տ», «դիլաբիկ», «վարոպոլ», «ՏԵԴԱ», «օքսիլիտ», «օքսիբակտոցիդ», «նոգեմատ», «նոգեմացիդ» դեղամիջոցները:

Այն մեղվախոցները, որոնք ունեն նոգեմատոցի խնդիր կարող են օգտագործել «նոգեմատ» պատրաստուկը: Մեղվապահները, կանխարգելման նպատակով, շատ հաճախ փտախտային հիվանդությունների դեմ օգտագործում են հակաբիոտիկներ, այդ թվում՝ օքսիլիտ կամ օքսիբակտոցիդ: Կարիք չկա կանխարգելել այդ հիվանդությունները, եթե դրանք առկա չեն մեղվախոցում, իսկ եթե նկատվում է 1-2 հիվանդ մեղվաբնատանիք, ապա դրանք իրենց գույքով պետք է այրել: Օքսիլիտի և օքսիբակտոցիդի հաճախակի օգտագործումից մեղվաբնատանիքը դիմադրողականություն է ձեռք բերում, և եթե փտախտային հիվանդությունների բացիլներ լինեն մեղվախոցում, ապա այս դեպքում դեղեր օգտագործելը չի օգնի, իսկ մեղվաբնատանիքները դատապարտված կլինեն անկման:

Ներկայումս արտերկրից հետաքրքրություն կա հայկական մեղրի ներմուծման վերաբերյալ: Մեղվապահների ճիշտ մոտեցումը մեղվաբնատանիքների պահվածքի տեխնոլոգիայի, բուժման, մեղրի մարկետինգի հարցերով կնպաստի արտահանման գործընթացի արագացմանը:

Կարեն Ավերիսյան

գյուղատնտեսական գիտությունների թեկնածու, դոցենտ
«ԻՆՏԱԳՐԻՖՈՒԴ» Գյուղատնտեսության և Պարենի Առևտրի Միջազգային Գործակալություն

ԿՈՈՊԵՐԱՅԻՍ

Առաջարկում են գիտնականները

ԿՈՈՊԵՐԱՅԻՍՆ՝ ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍԱԿԱՆ ՏԵԽՆԻԿԱՅԻ ԱՐԴՅՈՒՆԱՎԵՏ ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ՄԻՋՈՑ

Ագրարային բարեփոխումների շնորհիվ, մեքենայրակորային հավաքակալանների տեխնիկայի սեփականաշնորհումը հանգեցրեց նրան, որ փարինների ընթացքում մեծ ջանքերի շնորհիվ ձևավորված համակարգն ու բարձր արդյունավետությամբ գործող քրակորային հավաքակալանները մասնավորեցին, իսկ հզոր ներուժ ունեցող նորոգման արհեստանոցները հիմնովին ավերվեցին:

Տարեցտարի տեխնիկական միջոցների նորացման մակարդակի նվազումը, նորոգման բազաների բացակայությունն էլ ավելի վատթարացրեց վիճակը. առանձին տեխնիկայի ձեռք բերման տնտեսապես աննպատակահարմարության, մեքենայական ծառայությունների չհիմնավորված սակագների պատճառով, նոր ձևավորված գյուղատնտեսական տնտեսությունների համար դարձան ոչ մատչելի:

ՀՀ-ում 2016 թվականի գյուղատնտեսական տեխնիկայի վերաբերյալ պաշտոնական վիճակագրական տվյալները վկայում են, որ դրանց քանակները բավարար են (100 գյուղատնտեսական տնտեսությունների հաշվով ընկնում է 4.2 տրակտոր, 0.8 կոմբայն, 1.1 գութան, 0.3 շարքացան, 0.6 խոտինձիչ և 4.5 բեռնատար ավտոմեքենաներ): Շահագործման պիտանելիության տեսակետից դիտարկելիս պարզվում է, որ դրանց մեծ մասը մաշվել են, գտնվում են անսարք վիճակում, տրակտորների միայն 5,6 %-ը և կոմբայնների 5.0 %-ն են բավարարում նորմատիվային ժամկետներին, մնացած 94-95 %-ը ենթակա են դուրս գրման:

Միաժամանակ, եթե նկատի ունենանք, որ մեքենայացված աշխատանքների սակագներն ամբողջությամբ թելադրվում են տեխնիկայի սեփականատերերի կողմից, ապա պարզ կդառնա, թե ինչու ֆինանսական սուղ վիճակում գտնվող գյուղատնտեսական տնտեսությունների զգալի մասը չի կարողանում օգտվել այդ ծառայություններից. վարելահողերի տարածքների անմշակ թողնելը տեխնոլոգիական գործընթացների ժամկետների խախտումները, արտադրության արդյունավետություն նվազումը պայմանավորված է հենց այդ խոչընդոտներով:

Պետք է նշել, այս վիճակը դեռևս չի բարելավվում և ներկա փուլում իրականացվող փոփոխությունները նույնպես զերծ չեն թերություններից: Տրակտորային հավաքակալանները չեն ձևավորվում համալիր կազմով և անհրաժեշտ մեխանիզմներով, «գյուղատնտեսության տեխնիկական վերագինման և գյուղատնտեսական տեխնիկայի օգտագործման հայեցակարգով» նախատեսված պահանջները լիարժեք չեն կատարվում:

Խնդրի լուծման համար հաճախ կարելի է հանդիպել այնպիսի տեսակետների, որոնք՝ առանց հիմնավորումների առաջարկվում են մարզերում ստեղծել ՄՏԿ-ներ, որևէ կառույցի համակարգում կամ անկախ կազմակերպական միավորի ձևով: Այն լավ գաղափար է, բայց գործնականում ներդրման առումով բարդ ու անարդյունավետ է:

Քանի որ տեխնիկայի հիմնական պահանջարկը ձևավորվում է փոքր չափեր ունեցող տնտեսությունների կողմից, որոնց չափերը անհամեմատ փոքր են (մինչև 1000-2000 մ²), հողակտորները տեղաբաշխված են տարբեր հողակտորների վրա (որոշ դեպքերում տեղադրված են 10-15 կմ հեռավորության վրա), մեկ տնտեսության հողատարածքը բաղկացած է 3-4 հողակտորներից, (որոնք օբյեկտիվ և սուբյեկտիվ պատճառներով միաժամանակ չեն մշակվում), տարբեր են նաև մշակաբույսերի կազմը, որոնք պահանջում են տարբեր տեխնիկական միջոցներ և լրացուցիչ ծախսեր, ապա անհրաժեշտ է հանդես գալ նոր նախաձեռնություններով:

Մեր հետազոտության արդյունքները վկայում են, որ մեքենատրակտորային հավաքակալանները պետք է կազմակերպել այնպիսի գործոններից ելնելով, ինչպիսիք են գյուղատնտեսական գործունեությամբ զբաղվողների հնարավորությունները, հավաքակալանի օգտագործման արդյունավետությունը, նախատեսվող տեխնիկական միջոցների նորմատիվային ծանրաբեռնվածության ապահովումը, մեքենայացված աշխատանքների միավորի ինքնարժեքը և սակագները, որոնք ընդունելի և փոխշահավետ լինեն երկու կողմերի համար: Այս գործոնները կարող են ապահովվել միայն որոշակի կարգավիճակ ունեցող այնպիսի կազմակերպական միավորի առկայության դեպքում, երբ հավաքակալանի արդյունավետությունը համարվում է գերակա, և տեխնիկական միջոցները ձեռք բերողը, շահագործողը, նորոգողը գտնվում են նույն տնտեսական միավորի կազմում, գործում են փոխադարձ համագործակցության սկզբունքներով, օգնելով ու լրացնելով, աջակցելով միմյանց, վերջնական արդյունքներով պայմանավորված՝ բոլորն ունեն որոշակի շահեր:

Յուրաքանչյուր տրակտորային հավաքակալան կազմակերպելու ժամանակ, ընձեռնված հնարավորությունից ելնելով՝ կարելի է ընտրել ՀՀ օրենսդրությամբ սահմանված կազմակերպա-իրավական ձևերից որևէ մեկը: Սակայն գործընթացը պետք է իրականացվի առանց պարտադրանքի և բազմակողմանի հիմնավորումներով, որպեսզի ստեղծված միավորի գործունեությունը լինի արդյունավետ և ունենա հետագա շարունակականություն: Ներկա պայմաններում նշած սկզբունքներին և պահանջներին առավելագույնս համապատասխանում է «կոոպերատիվ» կարգավիճակը, որի համար առկա են որոշակի նախադրյալներ ու ձևավորման բարենպաստ միջավայր:

Ուսումնասիրությունները վկայում են, որ այս դեպքում նույնպես միանշանակ մոտեցում չի կարելի ունենալ, քանի որ կոոպերատիվներում նպատակահարմար է տրակտորային հավաքակալաններ կազմակերպել և տեխնիկա ձեռք բերել (հատկապես՝ տրակտոր), եթե կոոպերատիվն ունի առնվազն 100 հեկտար և ավելի վարելահողեր:

Գյուղատնտեսության առանձնահատկություններով, տարածաշրջանների բնատնտեսական պայմաններով, արտադրության մասնագիտացմամբ, հողակտորների փոքր չափերով, մշակվող տարածքների հեռավորության պայմանավորված՝ առաջարկում ենք նշված խնդիրները լուծել միմյանց լրացնող երկու հավաքակալանների ձևավորման միջոցով՝

1. տարբեր մասնագիտացում ունեցող երկու տարածաշրջաններում (մարզերում) հիմնավորել նման հավաքակալանների կազմակերպման նպատակահարմարությունը (ըստ մշակված մեթոդիկայի) և ընտրել տեղակայման համապատասխան տարածքներ: Առաջին քայլով, խոշոր համայնքներում (կամ՝ մի քանի համայնքներում) մեքենայացված աշխատանքների ծանրաբեռնվածություն ապահովելու դեպքում, ստեղծված կոոպերատիվներում, սեփական միջոցներով և պետական աջակցությամբ ստեղծել միջտնտեսային (միջկոոպերատիվային) մեքենա-տրակտորային հավաքակալաններ: Այս դեպքում հավաքակալանների կազմի տեխնիկական միջոցների կազմում կարող են ընդգրկվել գյուղապետարանների տրամադրության տակ գտնվող, համայնքի սեփականատերերին պատկանող, դրամաշնորհներով և լիզինգով, ինչպես նաև՝ կոոպերատիվների անդամների միջոցով ձեռք բերված այլ տեխնիկական միջոցները:

2. Հաջորդ փուլում կամ դրան զուգահեռ, յուրաքանչյուր մարզում պետական աջակցությամբ, պետություն-մասնավոր հատված համագործակցությամբ, ստեղծել մեկական համատեղ գյուղատնտեսական տեխնիկական սպասարկման և նորոգման տարածքային կենտրոն: Այս դեպքում հավաքակալանի կազմում միավորել մեծ արժեք ունեցող և անհրաժեշտ ծանրաբեռնվածություն ապահովող այնպիսի տեխնիկական միջոցներ, որոնք ֆինանսական առումով չեն կարող ձեռք բերվել կամ տնտեսապես անպատակահարմար է ունենալ տարածքային կոոպերատիվների մեքենատրակտորային հավաքակալաններում:

Ջավադյան Հրաչիկ, տնտ. գ. թ., դոցենտ
Եսոյան Արամայիս, տնտ. գ. դ., պրոֆեսոր
ՀԱԱՀ

ՀԵՏԱԲՈՒԹՅՈՒՆ Է...

ԹՈՔԱԽՈՏ

Palmonaria՝ գաղտնիկազգիների ընտանիքին պատկանող բազմամյա խոտաբույս է: Միջնադարի բժիշկ Մապրիոլիի կազմած դեղաբույսերի ցանկում այն նկարագրված է՝ որպես «թոքերը բուժող ուժ ունեցող», նաև այն, որ օգտակար է թոքախարով հիվանդների համար: Շատ լեզուներում բույսի անվանումը կապված է «թոքեր» բառի հետ՝ լատիներեն, գերմաներեն, անգլերեն, ռուսերեն, հայերեն այլն:



Բույսի ցողունն ուղղահայաց է՝ մինչև 30 սմ բարձրությամբ, անհարթ, մանր նստադիր տերևներով: Կոճղարմատից աճող ցողունները զարգանում են երկրորդ տարում: Մերձարմատային վարդակի տերևները սրտաձև են, երկարակողմ, հիմքում ձգված: Բոլոր տերևներն ունեն սպիտակ պուտիկներ, անհարթ են՝ ծածկված մազիկներով:

Ծաղիկները զանգակաձև են, ողկույզներով տեղակայված ճյուղերի գագաթին, ծաղկում է մարտ-մայիս ամիսներին: Ծաղիկների գույնը կապված է ներքջային հյութի թթվայնության հետ: Ծաղկաբողբոջի մեջ ռեակցիան թթու է և գույնը՝ վարդամոխրագույն: Վառ գունավորումը դեպի ծաղիկն է բերում միջատներին: Փոշոտումից հետո ռեակցիան դառնում է չեզոք կամ թույլ հիմնային, իսկ ծաղիկները՝ կապույտ և մանուշակագույն: Փոշոտման ենթարկված ծաղիկների գույնը խամրած է: Պտուղը բաղկացած է չորս ձվաձև, սուր կլորավուն ընկուզիկներից:

Թոքախոտի ծաղիկները տարբեր են՝ մի քանիսի մոտ երկար են սունակները, մյուսների մոտ՝ առեքնները: Նման դասավորությունը խոչընդոտում է բույսի ինքնափոշոտմանը: Տերևի միջբջային տարածքները լցված են օդի պղպջակներով, լույսը բեկվում է դրանցում, ինչի պատճառով տերևի վրա երևում են սպիտակ պուտիկներ:

Բույսը շատ արժեքավոր մեղրատու է, քանի որ ծաղկում է վաղ գարնանը: Մեղրատվությունը բավականին բարձր է՝ 100 կգ/ հա: Բույսի այլ անվանումներն են՝ մեղրուկ, մեղրախոտ: Անգլիայում բույսը մշակվում

և օգտագործվում է սննդի մեջ: Մեղրուկն ունի մի քանի վայրի և մշակովի տեսակներ: Տարածված է Տավուշի մարզում: Աճում է սաղարթախիտ՝ հատկապես կաղնու և հաճարենու անտառներում, բացատներում, թփուտներում, փոքր ձորակներում:

Բուժիչ հատկություններ ունի բույսի վերգետնյա մասը, մթերել ծաղկման շրջանի սկզբում, երբ բողբոջներն արդեն հասունացել են: Փռել բարակ շերտով, չորացնել հով տեղում կամ ծածկի տակ, պահպանել մեկ տարի: Պարունակում է սալիցիլաթթու, լորձանյութ, դաբաղանյութ, B խմբի և C վիտամիններ, ռուտին, զգալի քանակությամբ երկաթ, կրեմնիում, այլ արժեքավոր միկրո և մակրոտարրեր:

Ունի բարերար ազդեցություն էնդոկրին համակարգի վրա, արյունարգել, արյունաստեղծ, կապող, փափկեցնող, պարուրող, վերքամոքիչ, հակաբորբոքային, հականեխիչ, խորխաբեր հատկություններ: Որպես միզամուղ՝ կիրառվում է միզաքարային հիվանդության, երկվանդերի և միզապարկի բորբոքումների դեպքում: Նաև օգտակար է ստամոքսաբորբի, սակավարյունության բուժման ընթացքում՝ որպես օժանդակ միջոց:

Ինչպես հարյուրավոր տարիներ առաջ, կիրառվում է վերին շնչուղիների և թոքերի հիվանդությունների բուժման համար: Արյան քանակային և որակական բաղադրությունը վերականգնելու համար խմում են թուրմը, իսկ թարմ տերևներն ուտելի են:

Մեղրուկը հրաշալի միջոց է դիմադրողականությունը բարձրացնելու համար. 2 ճ/գ չոր խոտը 10-15 րոպե թրմել 300 մլ եռջրում, քամել և խմել 100-ական մլ՝ օրը 3 անգամ:

* Լողացրեք երեխաներին մեղրուկի թուրմով:

* Արտաքին արյունահոսությունը դադարեցնելու, վերքերը բուժելու համար ցանեք խոտի փոշին կամ դրեք թարմ տրորած տերևները՝ մեղրուկը նաև յոդ է պարունակում:

Հյութը մեղմացնում է բոլոր տեսակի բորբոքային ընթացքը, կարգավորում օրգանիզմի նյութափոխանակությունը, օգտակար է լյարդի և թուրքով հիվանդների համար: 10-15 ճ/գ թարմ հյութը լուծել 600 մլ եռջրում, խմել 200-ական մլ, օրը 3-4 անգամ՝ սնվելուց կես ժամ առաջ: Շարունակել 2-3 շաբաթ: Զգալիորեն կբարելավվի հիվանդի առողջական վիճակը: Մեղրուկը չի կարելի երկար օգտագործել հաճախակի կրկնվող փորկապության դեպքում:

Այսպիսին է այս հրաշալի բույսը՝ ապահովում է մեղուներին վաղ բերքով, ապաքինում նվազ երեխաներին, բուժում բազմաթիվ հիվանդություններից: Կարճ է մեղրուկի ծաղկման շրջանը, որից հետո բույսը «անհետանում» է՝ մինչև հաջորդ տարվա ձնհալը:

Լիլիթ Գասպարյան

ԵՐԿԱԹԻ ԴԵՐԸ ՄԱՐԴՈՒ ՕՐԳԱՆԻԶՄՈՒՄ



Երկաթը մարդու օրգանիզմին անհրաժեշտ կարևորագույն միկրոէլեմենտներից է: Չափափաս մարդու օրգանիզմում կա մոտ 4 գ. երկաթ, որի 30 %-ը գտնվում է պահեստավորված ձևով՝ լյարդում, փայծաղում և ոսկրածուծում: Երկաթի հիմնական մասը մտնում է էրիթրոցիտների հեմոգլոբինի և միոգլոբինի կազմի մեջ: Երկաթի նկատմամբ օրական պահանջը կանանց մոտ կրկնակի ավել է՝ պայմանավորված օրգանիզմի առանձնահատկություններով:

Երկաթի դերն ու նշանակությունը.

- մասնակցում է արյունատեղծման պրոցեսներին, կանխում է սակավարյունության առաջացումը,
- մասնակցում է թթվածնի տեղափոխմանը հյուսվածքներում և ածխաթթվի դուրս բերմանը օրգանիզմից,
- կարգավորում է վահանաձև գեղձի ֆունկցիան
- կարգավորում է B խմբի վիտամինների յուրացումը,
- մասնակցում է օրգանիզմի աճի պրոցեսներին
- կարգավորում է իմունային համակարգի գործունեությունը
- լյարդի կազմում մասնակցում է թույների չեզոքացման պրոցեսին,
- բարելավում է մաշկի, եղունգների և մազերի վիճակը:

Երկաթի անբավարարության հետևանքով մարդու մոտ նկատվում է՝

- սակավարյունություն,
- հոգնածություն
- մարսողական խանգարումներ
- երեխաների մոտ աճի պրոցեսների դանդաղում
- վահանաձև գեղձի ֆունկցիայի խանգարում
- մազաթափություն
- մաշկի չորություն
- եղունգների շերտազատում:

Երկաթը օրգանիզմ է մտնում սննդի միջոցով:

Բուսական մթերքից երկաթով հարուստ են հատկապես՝ սև հացը, ցորենի թեփը, խոշոր աղացած ալյուրով պատրաստված հացը, իսկ բարձր կարգի ալյուրով թխված սպիտակ հացը երկաթ չափ քիչ է պարունակում: Երկաթով հարուստ են նաև լոբին, ոսպը, ծավարեղենը, կանաչ տերևով բանջարեղենը, դդումը, տանձը, դեղձը, խնձորը, չամիչը, ծիրանի չիրը և այլն: Իսկ կենդանական ծագման մթերքից երկաթով հարուստ են միսը, լյարդը, ձուն, ձուկը, կաթնամթերքը: Օրգանիզմի կողմից յուրացվում է սննդի միջոցով ստացված երկաթի ընդամենը 10 %-ը:

ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

ՍԿՍՎԵԼ Է 2017 թ. ԲԱԺԱՆՈՐԱԳՐՈՒԹՅՈՒՆԸ

«ԱԳՐՈԼՐԱՏՈՒ» թերթ

1 համարի գինը՝ 120 դրամ
6 ամսվանը՝ 1980 դրամ
1 տարվանը՝ 3960 դրամ

«ԱԳՐՈԳԻՏՈՒԹՅՈՒՆ» ամսագիր

1 համարի գինը՝ 1350 դրամ
6 ամսվանը՝ 4050 դրամ
1 տարվանը՝ 8100 դրամ

Ըաժանորդագրությունը իրականացնում են՝

- ✓ Գյուղատնտեսության աջակցության համապետական և մարզային կենտրոնները
- ✓ «Դաշնություն»,
- ✓ «Դաշնամուկ»,
- ✓ «Պրեմ-Անտաշե»

կազմակերպությունները



Հարգելի քաղաքացիներ,

Տեղեկացնում ենք, որ Գյուղատնտեսական հանրագիտարան ձեռք բերելու համար կարող եք զանգահարել 011 52 48 34 հեռախոսահամարով:

Հանրագիտարաններն առկա են նաև Գյուղատնտեսության աջակցության մարզային կենտրոններում, ինչպես նաև՝ «Նոյան Տապան» և «Բուկինիստ» գրատներում:



ԱԳՐՈԼՐԱՏՈՒԼ
AGRONEWS

Հասցեն՝ Երևան, Մամիկոնյանց 39ա, հեռ.՝ 23-21-02, ֆաքս՝ 23-03-80
E-mail: asrc@cln.am կայք http://www.asrc.am

ՀԻՄՆԱԴԻՐ ՀՐԱՏԱՐԱԿՉ

ՀՀ Գյուղատնտեսության նախարարություն
«Գյուղատնտեսության աջակցության հանրապետական կենտրոն» ՓԲԸ

Տնօրեն

Գլխավոր խմբագիր և
համարի պատասխանատու՝

Ա. ՎԱՀՄԵԱՆ

Լ. ՇԱՀՆԱԶԱՐՅԱՆ

Տպաքանակ՝ 1100
2 տպագրական մամուլ
գրանցման թիվ՝ 01 Մ՝000226
դասիչ՝ 69105
պատվեր թիվ՝ 6
ստորագրված է տպագրության 24.02.2017 թ.
տպագրվում է ԳԱՀԿ տպարանում,
Երևան, Մամիկոնյանց 39ա